



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՐԻՍ ՎՄՄՆԱԼՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒՄԱՐ 1902

ԹԻՒ 1

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եւ այդ կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն այ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեալական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եւսէ հոգին չձարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ԲԱՅՈՒԱԾ Է “ԱՆԱՀԻՏ,,Ի

Չ Ո Ր Ր Ո Դ

Տ Ա Ր Ե Մ Բ Ձ Ա Ն Ե

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԻԿ ՊԷՏԲ Է ՎՃԱՐԵԼ

Այն բաժանորդները որ երբորդ տարուան բաժնեգինը չեն վճարած, կը խնդրենք հաճին անյապաղ վճարել զայն՝ եթէ կ'ուզեն որ այսուհետեւ շարունակեն ԱՆԱՀԻՏ ստանալ:

ԱԶԴԵՐ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

ԹԻԻ 1

ԱՆԱԹՈՂՅՈՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶԸ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Զ.



ԹԻԻ 2

ԱԼՖՐԵՏ ՏԸ ՎԻՆԵՐ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Զ.

Այս գրքիկները զրկուեցան ԱՆԱՀԻՏԻ բաժանորդներէն անոնց որ երբորդ տարուան բաժնեգին վճարած են, ԱՆԱՀԻՏԻ բաժանորդ չեղողներ կրնան զայն ընդունիլ՝ ՄԵԿ Ֆրանք զրկելով: Այն բաժանորդները որ պիտի չ'փութան վճարել իրենց անվճար մնացած բաժնեգինները, պիտի ընդունին այս գրքիկները՝ ձրիաբար:

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1901

ԹԻՒ 1

ՀԱՅԳԻՐՔ

ԱՌ ՍՈՒՐԲ ՍՈՓԻՍ.

—o—
Ա.

Աղօտ պահուն, լուռ, աչուըներս դեպ ի քեզ,
Ո՛վ սուրբ տաճար, խորհրդակոծ կ'երագեմ՝
Ըզքեզ հաւատքս կանգնեց, ճոխ եւ վըսեմ,
Որ դու զայն միշտ փառաւորես եւ գովես,
Եւ յաղթութեան զատրիկ տօնես անդադար —
Բայց զերեցար, այրիացար, պըզծեցար :

Աղօտ պահուն ա՛յնչափ ամբաւ կը թըլիս
Երբ հովանիդ հոծ մըթութեան կը խառնես՝
Ու կարծես սին ըստուերներով կը յառնես
Ուրուականի մը պէս, կ'ըսես՝ Տեսէք զիս .
Ե՞րբ պիտի գայ իմ փըրկութիւնս, քրիստոնեայք,

Պիտի ծագի սիրոյ այդ :

Ո՛վ կամարներ ամպի պէս խիտ, քովէ քով,
Շըքեզ զըսներ ուր Պատմութեան մեծ կառքը
Կը մըտցըներ ինքնակալաց վառ փառքը,
Ո՛վ քովթարներ, կանգուն հըզօր սիւներով,
Որ վիթխարի ըմբշամարտներ կը թըլիք,
Ժամանակին զէմ ախոյեան ու մարտիկ :

Սըրբազան շէնք, պատըսպարան հին գարուց
Որ կը փախչին եղանակաց առջիւէն,
Անյիշելի երկիւղն այլ եւս կը խըւեն,
Կ'արհամարհեն քայքայիչ սի ու զայրուց —

Սեւ էք բոլոր . կը քողարկէ սուգ ըզձեզ,
Կը քողարկէ վիշտ մ'այսպէս :

Սուրբ Սոփիա կալանաւոր է հիմայ .
Մինարէներն իրենց դըրչով երկնից տակ
Կը քանդակեն բառ մը միայն, Յաղթանակ .
Եւ օրն ի բուն կատարներէն կը պոռայ,
Կը սըլանայ Իսլամի կոչն, ահեղ բօթ,
Ատեղութիւն քարոզելով երկնից մօտ :

Կը պաղպաղեն անոր ամբիծ բըրբըր,
Կը դարեւորին այդ անողորմ սուր ձայնէն,
Հըրիշտակներու հետ արաստուք կը ցանեն,
Քու գերութիւնդ կ'ողբան երկնից մէջ՝ վերը,
Ինչու որ այժմ գազանութեան որջ դարձար,
Ոխութեան որջ, ո՛վ Տաճար :

Աղաւնիներն որ խիտ առ խիտ կը թըռին,
Եւ կը սերեն քու ծերպալից հին պատերդ,
Ի՞նչ, շե՞ն խըրաչըր եւ շե՞ն լըսեր մերթ ընդ
մերթ
Խուլ հեծութիւն մ'որ, տըրտմալից եւ խորին,
Կամարներէդ, զըմբէթներէդ կը թընդայ,
Կը կականէ, կը բողբէ, կ'որոտայ :

Վերջին վըկայ Արեւելքի պարտութեան,
Սուրբ Սոփիա, անմըխիթար կը նըստիս,
Դեռ կը սպասես բարեգուշակ աւետիս,
Դեռ կը սպասես որ վերանայ վեցդարեան
Տըխուր երկար նախատանքդ, ո՛վ սըրբավայր,
Բիւզանդիոն, նախկին մայր :

Բայց քրիստոնեայ ազգերն, աւա՛ղ, թող կուտան
Որ Իսլամի գարշապարին տակ մաշին

Կրճեայ սալերըդ , թող կուտան որ փոշին
 Երբնաքարերըդ պարտըկէ, սո՛ւրբ խորան,
 Եւ թող կուտան որ հող, անհաշտ, մոլեգին ,
 Որզւոցըդ դէմ մահ ըսպառնան վերըստին :

Դեռ կը հեծես , հիմունքըդ մերթ կը սարսին,
 Այսչափ ամօթ , այսչափ լուտանք թըշնամանք
 Զայրոյթ կուտան քեզ , այսչափ վիշտ, այսչափ
 ժանգ ,

Նախկին փառաց տըխրութեան հետ միասին՝
 Կը խըռովեն ըզքեզ ու գուն կը խորհիս —
 Ի՞նչ, պիտի չգա՞ն փըրկել զիս :

Եկեղեցի, արգեօք դիտե՛ս որ հիմայ
 Ալ չի խօսիր Յիսուսի հեզ յորգորը,
 Գիտե՛ս արգեօք, խորտակեցաւ աթոռը,
 Ուր կը նըստէր ան , հաշտութեան քահանայ,
 Ոպնիաղեայ դէմքով , պայծառ աչքերէն
 Ոսկի քարեր կը շողային վեհօրէն :

Բ

Բայց այն պահուն երբ խոր դիշեր է անա,
 Թերեւս անյայտ որմնաղըռնէն ելլէ գայ
 Վեհ Նայրապետ մը՝ միթրայով , սանդալով ,
 Տարածելով ամբաւ շուրջառ մ'իտեւէն ,
 Զոր իր ոտքերը հազիւ հազ կը թօթուեն :
 Սրբարանիդ մէջ անա կանգ առնելով ,

Վերամբառնայ իր հովուական մատանին ,
 Օրհնէ ըզքեզ , քաւէ ըզքեզ վերըստին ,
 Թէ գըձձեցար, աղարտեցար օրն ի բուն,
 Եւ աստղածեւ արցունքներով ողբայ ան
 Սեւ սարեղարձը սուրբ խաչին գերութեան ,
 Եւ քեզ ըսէ՝ Յուսա՛ , յուսա՛ , երկնից տուն :

Գ

Ո՛հ , ի՛նչչափ ցուք ու ճառագայթ
 Կ'ողողէին Սուրբ-Սոփիան .
 Գըմբէթը խոր եւ ոսկեխայտ՝
 Ծիածանի պէս երկնեքիեան .
 Կանթեղ ու մոմ հազար հազար
 Կը շողային ու խտերով վառ .
 Տաճարը լի էր պարծանքով ,
 Տիրոջ վըսեմ երեւման պէս՝
 Հըրբարբոք սակայն անկէզ ,
 Կը փողփողէր իր լոյս փառքով :

Եւ կանթեղները խիտ առ խիտ,
 Թըւչնոց պէս հող կ'երեւային ,

Իրենց կըտուցը մարգարիս ,
 Ճաճանչաւոր եւ օրային :
 Զահերն անհուն , խոր , բիւրեղեայ ,
 Կը ցանէին ոսկի ծաղիկ :
 Սուրբ Սոփիա , միշտ աննրման ,
 Սուրբ Սոփիա միշտ սիրական ,
 Կը կատարէր սիրոյ հարսնիք :

Եւ կերոններն , իրարու քով ,
 Կը քալէին դանդաղ դանդաղ ,
 Եւ քահանայք երկար շարքով,
 Նըւագելով հոգեւոր տաղ .
 Թափօրը վերջ չունէր կարծես,
 Ու կը չըւէր տեսիլքի պէս :
 Ահա փայլակ մը կը թըռէր ,
 Բոցոտ անդունդ մը կը շողար ,
 Հըրբաչափառ ծով մ'անդադար
 Կը ծածանէր կը փըրփըրէր :

Կարծես լուսին ու արեգակ
 Այնտեղ ինկած կը վառէին .
 Աստղերն, անչափ զըմբէթին տակ,
 Կարծես իրար կը փարէին :
 Անաղօօ սէր եւ բորբոքում,
 Պայծառ հաւատք . փայլատակում,
 Ո՛վ հրեշտակաց պաշտպանութիւն ,
 Ո՛վ տէրունի լուսահանդէս ,
 Ո՛վ ճըրագաց շքեզ պարտէզ—
 Ո՛վ Քրիստոսի դարպաս ու տուն :

Սուրբ Սոփիա լոյս էր բոլոր ,
 Գիշեր ցորեկ կը պըլպըլար .
 Քրիստոնէից երաշխաւոր
 Եւ երկնից հետ միջնորդ կ'ըլլար :
 Միւս կողմանէ Հայոց Անին ,
 Նոյնպէս զգեցած իր ծիրանին ,
 Լուցանելով հազար տաճար ,
 Բարբարոսին դէմ ամուր վէժ ,
 Բիւզանդիոյ հետ դէմ առ դէմ՝
 Կը ճաճանչէր եղբայրարար :

Դ

Ո՛վ մեծափառ նըշխար , հիմա կը յիշես
 Բասիլէոսդ երբ զարդարուած ճոխապէս,
 Ծիրանեծին արքայ, հըլօր սէզ մարտիկ ,
 Զըմրուխտներով, կայծքարներով գեղեցիկ ,
 Ո՛մբարտաւան , քրքրեմազոյն վառ մոյկերով ,
 Կուդար նըստիլ սատուածախօս բեմին քով .
 Աջ թաթը ցուպ բըռնած եւ գունտ ճախ թաթթ

Մարգարտայնո , ոսկեղէն թագ ճակատը ,
 Տատրակին տակ ճաճանչներով ծըրարած՝
 Մերթ մեղապարտգլուխ կը հակէր զարնուրած
 Ու կը կարծէր՝ պիտի իյնայ զըմբէթը ,
 Պիտի ճըմլէ զինքն , ու սըրտին սուր խէթը
 կը չարչարէր հոգին : Խոժոռ հայեացքով
 Խրոխտութենէն կ'իյնար : Վերէն անթոթով ,
 Անվեհեր ճայն մը կը խօսէր , կը թընդար ,
 կարծես Սինա ամպիոնէն կ'որոտար .
 Եւ հայրապետ մը՝ բոցաշունչ պինչ լարած՝
 Ահեղ դէմքով՝ շուայտութեան եւ փառաց ,
 Դուժ նենգութեան , պոռնըկութեան , գո-
 ղութեան ,
 Թագաւորին , պատրիկներուն ճոխութեան
 Չարագուշակ գոյժ եւ աղէտք կը սպառնար :
 Մարգարէն ճր : կը բարբառէր տիրաբար

Աղգ մը պիտի ելլէր խիստ դառն անողորմ ,
 Պիտի քանդէր ամէն պատնէշ քաղաքորմ ,
 Մահուան նըման պիտի մըսնէր ամէն կայք ,
 Եր ձիւրուն տակ ոտնակոխ քրիստոնեայք
 Պիտի լային կակաղէին ի զուր տեղ .
 Ոչինչ պիտի խընայէր , ոչ շէն , ոչ գեղ ,
 Պիտի լափէր ունայնութեան պէս զաշխարհ .
 Մեծ ու կըրտսեր , ամենքն ալ ստոր արհամարհ
 Գերի , ծառայ եւ յաւիտեան անիծած ,
 Անշուռ պիտի կաղկանձէին փոշեմած ,
 Բանդի մեղաց ծովը խիստ շատ բարձրացաւ ,
 Երկայնամիտն Աստուած ահա զայրացաւ :

Եւ սուրբ ցամամբ մոլեգնելով չարաչար ,
 Անաթեմա՛յ , անաթեմա՛յ , կը պոռար :

Ե

Անաթեմայ , պատմութիւնն այժմ կը գոռայ .
 Բիւզանդիոն , յիմար եղար , վատ եղար ,
 Դու ըստացար յաճախ փըրկիչ Դեբորայ—
 Նըչկահեցիբր զանի , ըմբոստ երիվար :

Դու ուխտադանց եղար՝ նենգիչ , սուտ , խարդախ
 Դաշանց թըղթերը ժպրհութեամբ կըլլեցիր .
 Ոխ էր կըրօնքդ , արեամբ զեղուն ու թաթախ ,
 Փորըդ նախանձ կը տոչորէր , ո՛վ արբշիտ :

Բիւզանդիոն , պոռնիկ եղար լըրբաբար ,
 Բանդի պոռնիկ էր քու լըպիրջ թագուհիդ ,
 Երբ չըպարած դէմքով քեզի կ'երևար՝
 Բու նեխած սիրտըդ կը խընդար , ա՛յ անմիտ :

Դու զըղուելի խընջոյքներու կոչնական՝
 Յայրատութեան եւ Աստուծոյ պաշտօնը
 կը խառնէիր իրար : Բսիբ՝ պիտի գան
 Թագաւորները զարգարել մեր տօնը :

Բայց ստորնութիւն , կաւատութիւն , մեղկու-
 թիւն ,
 Մաշած ճանճոտ աչքով նըստան սեղանիդ .
 Հըրապարակ ելան ապա՝ կիսարթուն ,
 Եւ բազմացան ինչպէս մարախ , ինչպէս ծիտ :

Չորս դիգ առած շողմութեան շուները
 կը լըզէին ախտիդ վէրքերը սիրով ,
 Եւ արտաքին վայելչութեան տուները
 Պաշարալիբ էին զազիր ախտերով :

Դու ցոփութեամբ քընաթաթախ , ո՛վ քաղաք ,
 Ինչ կըրնայիր կանխատեսել , նըշմարել .
 կը բարձրանար շորս դիգ լըրբին աղաղակ , —
 Ձէիր կըրնար ճըշմարտութիւնը սիրել :

Չըհասկըցար որ հիւսիսի մըշուշը ,
 Անյայտութեամբ յըղի , պիտի փարատէր .
 Պիտի ժայթքէր ստերչ արգանդէն խուժողուժը
 Սուրը պիտի խօսէր եւ հուրը դատէր :

Հոգ մ'ունէիր միայն — նենգել Հայութեան :
 Անոր թագին արեւն ըզքեզ կը նեղէր .
 կը կարծէիր զանի ստիխ ախոյեան .
 Անով քու միտքըդ անընդհատ կը զբաղէր :

Գիշեր ցորեկ անդուլ , անխոնջ , անձանձիր
 Իր կործանման աշխատեցար , ո՛վ մորոս :
 Ամէն միջոց , ամէն հընարք փորձեցիր .
 Ո՛րչափ տըխմար էիր , ի՛նչ կոյր ի՛նչ գոռոզ :

Ձէիր ըսեր՝ Անին , Հայոց փառք պարծանք ,
 Չոր անհամար հոգով օժիտ ըստացան ,
 Անհաւատին դէմ պատուար է , ամուր ցանկ .
 Իր կորստեամբ ես ալ կ'իյնամ միաբան :

Յաջողեցար . չարակնութեան տըքնութեամբ ,
 կործանեցիր ըզմեզ : Աւա՛ղ եւ վա՛յ քեզ .
 Վա՛յ նաեւ մեզ , ինչպէս սիզուտ , ինչպէս շամբ ,
 Ալ Ասիա հըրգեհեցաւ հեշտապէս :

Պէտք ենք քարին պատին զարնել զըլուխնիս
 Մենք քրիստոնեայք որ վերութեամբ կը հեծենք

Ո՞վ մեզ չըզթայ կըռես , վիրագ , խըստավիզ
Նախանձով . մենք կըռեցինք զայն , միայնմենք

Բիւզանդիոն , ալ ո՞վ կըրնայ կարկատել
Քու սըխալներդ . ո՞վ կըրնայ Իսլամին
Համասարած վարմէն ըզ եզ աղատել :
Բիւզանդիոն , զուէն եղար հին թըշնամին :

2

Ո՞վ օր , ո՞վ թոթ , ո՞վ սոսկալի գարնու բանք ,
Բոլոր Պոլիս ոռնաց՝ Կորա՛նք , ա՛լ կորանք ,
Կործանեցաւ քաղաքը .
Կործանեցաւ , կործանեցաւ , լըմընցաւ ,
Ալ ի՞նչ սուգ կայ , ի՛նչ կըսկիծ կայ եւ ի՛նչցաւ ,
Փողեց մահուան հրեշտակը :

Ալ յայտնութեան օրը հասաւ , ի՛նչ յուսան .
Ո՞վ Աստուծոյ բարկութեան զառն զաւազան ,
Ի՛նչ խըստութեամբ կը զարնես .
Տապալեցաւ աշտարակին պահակը ,
Տապալեցաւ Աստուածապահ քաղաքը —
Աւազներու շեղչին պէս :

Սուրբ Սոփիա , ո՞վ ջըծծելի , ո՞վ թըշուա ,
Դու յաղթականդ տեսար՛նըստած երիվար՝
Քու սըբբարանըդ մըանել ,
Սըմբակակոխ ընել ըզքեզ , յոխորտալ ,
Բողի մը պէս նայել քեզի ու խընդալ .
Եւ գեղեցիկ ալ գըտնել :

է

Ի՞նչպէս արագ կ'երթան գարերն . եւ ի՞նչպէս
Աներեւոյթ կ'ըլլան նաեւ փըրփրաղէզ
Լեռնակարկառ դոռ ալիքներն ալ արագ .
Դու անշըշուկ ոտքեր ունիս , ժամանակ ,
Անկէց ի վեր շատ սուլթաններ գահ նըստան ,
Միջերկրական ծովէն մինչեւ Պարսկաստան՝
Կոտորեցին Յոյնը եւ Հայը յաճախ :
Յոյնը եւ Հայը կարկամած մըտարախ ,
Երկիւղներով տըրորուեցան անդադար :
Սակայն՝ երկիրն Օսմանցւոյն տակ կը թընդար
Կը հեծեծէր՝ խոպանացած եւ անշէն ,
Լուր կը խընդրէր հեռաշու մեծ հովերէն .
Թուրքը կուգար , ձեռքը կարմիր վառ երկաթ ,
Թուրքը կուգար՝ ամէն անկիւն , անընդհատ ,
Կը խարանէր , կը շարշարէր , կը տանջէր ,

Կը առչորէր : Ամենուրեք սուր կոչեր
Ու սուր ճըչեր պաղատեցան լուռ երկնից ,
Ամենուրեք անյուսութիւն ու կըսկիծ .
Լացին , լացին , մոլեգնաբար ոռնացին ,
Յիմարացան , անըզայ հողը խածին
Եւ աչու ըցին արցունքներով կուրացան :
Ոչ ոք լըսեց :

Դու զանոնք , ո՞վ սըբբազան
Վըսեմ տաճար , զու լըսեցիր խիստ յաճախ :
Եւ երբ հիմա անակնածու եւ անվախ՝
Քու գըմբէթիդ տակ հաւաքուած միաբան՝
Միշտ կեավուրին դէմ կը մոլին ու կ'ոխան ,
Չե՞ս փափաքիր , կաթողիկէ՛ , չե՞ս ցանկար
Թօթվել հի՛ուներդ , թօթվել քովթար , սիւն , կա-
մար ,
Ճըզմել զանոնք օրհասիդ տակ ու խըղդել :

Դու կը նայիս երբ ըսպիտակ ոսկեթել
Մեպեայ հանդերձ կը մերկանայ լուսնակը ,
Սըծաթի կոյս եւ կապելով լոյս թագը ,
Կը պաղպաղէ վերջալոյսին մէջ ահա ,
Ճաճանչներով քընքչանքներով կը ջանայ
Քու ըստուերները փայփայել հալածել .
Երբ կը սկըսի քամին մեղմիկ թեւածել ,
Ու կը գերէ զանի նոճին իր գոգը
Երբ ձըկընկուլ մը ձիւնափայլ թեւօքր ,
Կը բարախէ , կը կառաչէ ծովուն մօտ ,
Երբ աղբիւրներն իրենց խաղաղ կարկաչոտ
Մըմուռնջներով մութ տեղ հեզիկ կը խօսին .
Եւ կոհակներն ալ պաղպաղել կը սկսին ,
Երբ արեւմուտքը դեռ ազօտ կարմրաւոր ,
Կը բորթօքի հեռուն , հոգիդ մութ , պըղտոր ,
Սուրբ Սոփիա՝ երկայն ատեն կ'երագես :

Տեսիլք մ'ունիս քեզ տարփելի յուսոյ պէս
Ան կ'երեւայ միշտ . եւ ահա կը տեսնաս
Մեծ կարուան մը , եւ ահա դաս առ դաս
Կը յառաջեն պատկառելի երիցունք .
Քահանաներ բուրվառներէն սիրոյ խուռնկ ,
Հանդիսաւոր շըքեղ կընդրուկ կը ձըխն .
Խաչեր կուգան , արծաթեղէն , ոսկեղէն ,
Ու խաչվառներ կը թըբթըռան օդն ի վեր ,
Կը ցոլցըլան ականաշատ միթբաներ ,
Եւ ոսկեհուռն նափորտներ՝ վեհապէս .
Ի՛նչ աննըման թափօր է ատ , ի՛նչ հանդէս :
Եւ ետեւէն մեծ զըօջակներ կ'երեւան ,
տմնեքն ալ բաց , հովանաւոր յաղթութեան ,
Ամենքն ալ խաչ կըրող , խաչին թեւ տըրող ,
Ու վաչտեր , ո՞վ փառք , ախոյեան եւ ոսոխ

Գու դարաւոր գերջիդ, արի, ահաւոր,
 կուգան, կուգան, ահա իրենց հրաշափառ
 Ճաճանչաւոր զէնքերն ըզքեզ կ'ողջունեն.
 Ահա ծովէն, նաեւ կարմիր վառ ծովէն,
 Թըռչարաններն ամբողջ պարզած իբրեւ ամպ,
 Նաւատորմիդ մը պանծալի վեհութեամբ,
 Կը յառաջէ կամաց կամաց տիրաբար,
 Կայմերը լի գօրքերով խիտ անըսպառ,
 Ըզքեզ, ըզքեզ կ'ողջունէ, Սուրբ Սոփիա.
 Եւ թագաւոր մը, խաչապաշտ քրիստոնեայ,
 Ճամաք կ'ելլէ, կուգայ ըզքեզ փրկելու,
 Կուգայ ան, ա'խ, ա'լ ամօթի տակ հըլու
 Անարգութեան օրերն ի սպառ վերջացան,
 Ու խորաններդ դարձեալ պիտի սըրբանան,
 Դու կը խորհիս, ինչո՞ւ քաղաքը լուռ է.
 Թող ժողովուրդը կապերաները փրոէ,
 Թող ոտք ելլին քրիստոնեաներն ու ցընծան.
 Ի'նչ, չե՞ն տեսներ, չե՞ն հասկընար, կուրացա՞ն.
 Եկէք ինձի հետ կայնեցէք, ըստրուկնե՛ր,
 Ալելուեա՛, ալելուեա՛, Քրիստոս Տէր:

Բայց հորիզոնը թըխանալ կը սկըսի,
 Եւ ամէն կողմ ալ աղջամուղջ կը հոսի.
 Այն երփնազան ցոլքերն, աւա՛ղ, կը ցընդին,
 Ամէն տեսիլք կ'անյայտանայ վերըստին,
 Ու մըթութեան սարկը գիշեր կը մանէ.
 Եւ ա՛յն պահուն, արեւմտեան կողմանէ
 Կը բարձրանայ սուր, նըզոված կառայը,
 Գոռողութեան, դաժանութեան թառայը—
 Միւէզգիինն է: Աւա՛ղ, աւա՛ղ արսո՛ւս քեզ,
 Սուրբ Սոփիա, մահմետական, ըստրուկ ես:

Ը

Ա՛խ, այդ երազը: սո՛ւրբ տաճար,
 Մենք ալ կ'ընենք, եւ կը կարծենք
 Կը վերջանան բազմաշարչար

Օրերը՝ մերթ ընդ մերթ եւ մենք:
 Կը մորմօքինք, կը տըրորինք,
 Կը կըրենք բիւր բիւր նախատինք.
 Ու չ'ողորմիր մեզի երկինք —
 Եւ փըրկութիւն միշտ կ'երագենք.
 Ազատութի՛ւն, տարփելի՛ կոյս,
 Ե՞րբ պիտի դաս, ա՛խ, ձեռքըդ լոյս,
 Ճակատըդ աստըդ, սիրտըդ յոյս,
 Ե՞րբ պիտի գաս, մի՛շտ կը սպասենք:

Յուսա՛նք, յուսա՛նք, սո՛ւրբ Սոփիա,
 Թող յոյսը մեզ դրօշակ պարզէ,
 Թող խըրախոյս, քաջութիւն տայ,
 Մեր առջեւէն նըթայ վազէ:
 Ան է ամէն վըշտի ոսոխ,
 Ան է հըզօր, սէգ պայքարող.
 Ան է ուղղիչ եւ ան է շող:
 Սուրբ Սոփիա, զեռ օր մ'ունիս,
 Դու մոմաղարդ պիտի ըլլաս.
 Լոյս արցունքով դու պիտի լաս,
 Մարտիրոսները հանապազ
 Պիտի յիշես եւ ողորմիս:

Բայց քու խորքէդ պիտի հընչէ
 Մեծ ազազակ մը ցընծութեան.
 Ինչպէս մըրբիկ մը կը փըչէ
 Եւ ալիքներ կը բարձրանան՝
 Այսպէս ամբոխ մը խիտ առ խիտ,
 Ոտք ելլելով ուրախամիտ,
 Պիտի պոռայ քու գըմբէթիդ.
 «Ազա՛տ, ազա՛տ ես յաւիտեան»
 Այսուհետեւ, Սուրբ Սոփիա,
 Ոչ իսլամ ես, ոչ ֆրիստոնեայ,
 Ա՛լ քու անունդ պիտի ըլլայ
 Կաթողիկէ ազատութեան:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

«Մրիսիո», անգղո-ֆրանսական զեղարուեստական մեծ ամսաթերթը, 1901ի դեկտեմբերի քիւիսն մեջ հրատարակած է ծանօթ գրագիտ եւ արուեստի լինադատս պ. Կապրիել Մուլեի հետեւեալ յօդուածը է՝ «Տահիլի գործին վրայ»։ Յօդուածին կ'ընկերակցուին Շահիլի վեց բանկերու վերահասարուքիւնները (Ապուրի բաշխում, Պառուր, Իսալուհին, Հնահաւաքներու շարժուն տունը, Կենդանագիր Ալֆրետ Սթեվենսի, Կենդանագիր Անաթոլ Թրանսի, Մուրացիներուն)։

ՀԱՅ ՓՈՐՊՈՒՐԻՔ ՄԷ

Պ. ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ

o—o

Հայաստանէն, որու դաւակն է, անցնելով Վենետիկէն ուր երկար ատեն մնացած է՝ Թիեբոլոյի լուսաւոր քմայքէն եւ Տոմբրու քաղաքին արեւցուցիչ մթնոլորտէն զեթուած, պէտկար Շահին կկաւ, վեց եօթ տարիի չափ առաջ, Բարիզ հաստատուիլ։

Մետաքսափայլ հանդիսութեանց եւ դեռ ա՛յնքան մպտուն շնորհներու վարպետին հետեւողութեամբ մարդուած, եւ իր սկզբնաւորութեան օրերուն՝ ա՛յնքան հանոյքով թրղթատած ըլլալէ յետոյ անոր «քմահաճոյք»նեւրը, «այդ դիւցազնական հաւաքածուները, որոնց մէջ, Մորիս Պարէսի սիրուն բացատրութեամբ, Վենետիկի բոլոր հոգիները համախըմբուած են», ի՞նչպէս պ. Շահին կրցած է կազմել իր այն ցաւատանջօրէն սուր յղացումը որ ի յայտ կուգայ իր օ՛ֆորթներուն եւ բուանթ-սէշներուն մէջ։ Ատի արուեստագիտական հոգեբանութեան խնդիր մըն է, զոր շատ դժուար չէ լուծել։ Արդարեւ, ինչո՞ւ վարմանալ որ պ. Շահին, կեանքը լիտած ատեն ա՛յդքան տխրութիւն զգայ։ Այնպիսի պահումը առնական տարիքն է մտած, երբ իր հայրենիքը ամենէն ահռելի աղէտքներուն կ'ինթարկուէր ներկայ դանուեցա՞ւ արդեօք այն ջարդերուն որ կարծիր Սուլթանին հրամանով կատարուեցան, այն վայրագ կոտորումներուն որ իր երկիրը բզբուեցին, չեմ գիտեր։ Բայց արձագանքը իրեն բերաւ իր եղբայրներուն հոգեվարքի հոնտիւնները, իր մորթուած քոյրերուն ազազակները, եւ իր աչքերն անշուշտ երկնքին մէջ ընդնշմարեցին ցոլքը հրկեհներուն որոնք վառեցան հո՞ն, այն վայրերուն

մէջ ուր իր մանկութիւնն անցած էր (1)։ Կասկանալի է որ ատկից իր հոգւոյն մէջ անվանելի մեղամաղձութիւն մը պահած ըլլայ։

Այդ մեղամաղձութիւնն իր գործին կուտայ շատ մասնաւոր նկարագիր մը, իր փորագրութեամբ պատկերներէն շատերուն վրայ տեսակ մը սրտի ճնշում, անձկութեան պէս բան մը կը ծանրացնէ. ատոր կը պարտի, ամէն պարագայի մէջ, համոզուած եմ այդ մասին, այն հազուագիւտ պայծառատեսութիւնը որով կրցած է, լլալով հանդերձ օտարական մը, տեղափոխուած՝ միջավայրի մը մէջ որ այնքան տարբեր է այն միջավայրէն ուր ծնած է եւ անկից ուր իր արուեստագէտի աչքը կազմուած է, բարիզեան կեանքին երեւոյթները, նկարագիրներն ու տիպարներն ըմբռնել եւ սեւեւել։ Այդ մեղամաղձութիւնն է դարձեալ որ զինքն առաջնորդած է իր հետախուզութեանց մէջ, որ զինքը մղած է իրրեւ ուսումնասիրութեան նիւթ ընտրել չքաւորներու եւ բանւորներու, թափառիկներու եւ մուրացիկաններու, Մոնմարթրի եւ գիշերային ճաշարաններու սէր ծախող կնիկներուն այդ աշխարհը, որուն կը պարտի ա՛յնքան խորին ու սրտաճմլիկ ներշնչումներ։

Տարօրինակն այն է որ հասած ըլլայ առաջին հարուածէն՝ կարելի է ըսել՝ այդպիսիկատարելութեան մը, արտայայտելով նիւթի որոնց հետ այնքան քիչ էր ընտանեցած եւ որոնցմէ իր նախկին ուսումնասիրութիւնները պէտք էր որ աւելի զինքը հետացուցած ըլլային, եւ կիրարկելով գործիքներ որոնց գործածութիւնը շատերուն համար տարիներով վարժութիւն կը պահանջէ։ Որովհետեւ իր ստորագրած առաջին բլանշներէն մէկուն, որ թերեւս նոյն իսկ առաջինն է, «ապուրի բաշխում»ին մէջ, արդէն ինքզինքը ամբողջապէս տիրացած ցոյց կուտայ իր բարոյական ու թեքնիքական անձնաւորութեան։ Դիտողութեան սուր ձիրքեր, էջին կարգաւորման կատարեալ հմտութիւն մը, արժեքումներու թանկագին արուեստ մը, բոլորովին մասնաշատուկ բնորոշման կամք մը, անոր մէջ ի յայտ կը բերէին առաջին կարգի արուեստագէտ մը։ Պ. Շահին անկից ի վեր փորագրած է նոյնքան գեղեցիկ բլանշներ, բայց ոչ աւելի գեղեցիկ։ Համբերատար սպասումը այս սովալուկ ամբո-

(1) Յօդուածագիրը կարծած է թէ Հայաստան ծնած է Շահին, մինչդեռ Պոլսեցի է ան։

խին , այլ , կին , տղայ , ոմանք նստած՝ մայթե-
րուն քարին վրայ , այլք ոտքի կեցած , մաս մը
պատի մը կրթնած , ուրիշներ՝ խոնջէնքէն թու-
լայած սրունգներով , հագուստներու , ժէսթե-
րու , կեցուածքներու միօրինակ , կարծես մե-
սած գոյնը , տեսակ մը ճակատագրապաշտ հա-
մակերպութիւնը որ զէմքերը կը համակէ , եւ
առաջին կարգին վրայ , էրիկ մարդու կերպա-
րանք մը , բանուորի հագուստով եւ քասքէթով ,
ոտքի կեցած , զիմագծերը կարծես խուլ ըմ-
բոստացմամբ մը տոգորուն , զիմագծեր՝ աշխա-
սութեան ու ալքատութեան տառապանքնե-
րով գրոշմուած , այս բոլորը վստահ ձեռքով մը
գրուած է որովհետեւ այս բոլորը տեսնուած է
յուզուած ու անկեղծ աչքով մը . եւ արտայայ-
տութեան միջոցները այստեղ կատարելապէս
համաձայն են գտնուած արտայայտուելիք գա-
ղափարներուն եւ զգացումներուն հետ :

Հզորապէս զգացուած բաներու այդ տպա-
ւորութիւնը պէտկար Շահինի բոլոր գործե-
րուն մէջ կը գտնենք , եւ այդ յատկութեանն
է որ կը պարտի իր յաջողութեան մեծագոյն
մասը : Իր զգայնութիւնը ըթացած չէ երկա-
րատեւ ծանօթութեամբ մը այն տեսարաննե-
րուն որոնց մէջ կ'ապրի . երանի՛ թէ անոնց
հետ ունեցած շփումը չյափրացնէ զինքը ,
ինչ որ այնքան ուրիշներու քով տեսած ենք :
Երանի՛ թէ իր արուեստը չկորսնցնէ այդ հա-
մը որ այնքան մասնաւոր հրապոյր մը կուտայ
անոր : Զարմանքը զոր զգաց , յուզմունքը ու-
րով իր էութիւնը սարսափ հանդէպ տիպար-
ներու եւ տեղորոշողութեան որոնք մինչեւ այն ա-
տեն իրեն անծանօթ էին , իրմէ՛ զատ ուրիշ
մըն ալ զգացած էր , ուրիշ մըն ալ սարսափած
էր անով , նոյնքան խորապէս , եւ միեւնոյն
պատճառով : Մեր Սթենլինին կ'ակնարկեմ :
Սթենլին Զուրիցերիացի էր : Պ. Շահին Հայէ :
Երկուքն ալ , միեւնոյն անկեղծութիւնովը ,
Բարիզի գիւտն ըրին . եւ ցնցումը զոր իրենց
մէջ յառաջ բերաւ այդ գիւտը , իրենց տպաւո-
րութեանց առաւ այդ մասնաւոր թարմութիւ-
նը , այդ զգայնութեան սրութիւնը Սթենլինի
մօտ տեւական մնացած է . կը մազթեմ որ
պ. Շահին նոյնքան անեղծ պահէ իր տես-
ողութեան ինքնաբերութիւնը : Կը փութամ յայ-
տարարել թէ ամէն տեսակ պատճառներ ու-
նինք հաւատալու որ այդպէս պիտի ըլլայ :

Երկարօրէն թղթատեցի , վերջերս , ամբող-
ջական շարքը , կամ գրեթէ , իր փորագրած

նկարներուն . համախմբուելով , անոնք չկոր-
սընցուցին իմ աչքիս ոչ մէկն այն արժանիք-
ներէն զոր կարծեցի տեսնել անոնց մէջ երբ ,
անոնց հեաղհետէ երեւման միջոցին զատ զատ
տեսայ : Ընդհակառակն , ետեւէ ետեւ՝ զիտելով՝
անոնց արժէքը կը շեշտուի , եւ այդ շատ ինք-
նատիպ արուեստագէտին տաղանդը անոնցմէ ա-
ւելի հզօր եւ յստակ գուրս կը ցատքէ առով :
«Սեղճ մը» , «Գետափներուն վրայ քնացող կի-
ները» , «Երիտասարդ ստահակ մը» , «Սեղճ
մարդոց գլուխներ» , «Քլիշիի հրապարակը» ,
«Շաթօ-ուփ» , «Բանջարեղէն ծախող կիներ» ,
«Կարասիք տեղափոխողը» , «Թափառիկը» ,
«Հնահաւաքներու շարժուն տունը» , «Պուլվար
Նէյ» , «Պառաւ մուրացկանը եկեղեցիին առ-
ջեւ» , բոլորն ալ կեանքէն փրցուած տեսա-
րաններ են , իրենց ցաւազին կամ յատկանը-
շական ճշմարտութեան մէջ , եւ որոնցմէ գը-
ծաբարիչը կը ցած է ի վեր հանել , ամենաթան-
կազին շեշտելով , ամէն ինչ որ անոնք կ'ար-
ձակին խորունկ ու մարդկային : Այդ էջերուն
մէջ պէտք է մասնաւոր ուշադրութիւն մը
դարձնել «Բանջարեղէն ծախող կնկան» ,
«Թափառիկ»ին , եւ «Եկեղեցիին առջեւ պա-
ռաւ մուրացկան»ին վրայ : Պ. Շահինի ա-
րուեստը անոնց մէջ մագիստրական բնորոշման
մը կը հասնի : Աշխուժ ու գիտակից գրոցով
մը , որուն մէջ ինքնավստահ կամք կը զգա-
ցուի , արուեստագէտը լայն հորիզոններ կը
բանայ մեր երազանքին : Ծշմարտութիւնը
յարգող , զայն ոչ կը շափազանչէ եւ ոչ կը մեղ-
մէ . առանց ճոռոմութեան , տեսարանի յար-
գարման մէջ ամենածայրայեղ պարզութիւն
գնելով , միայն ա՛յնչափը որ հարկաւոր է բա-
տեղծելու համար միջավայրը որուն մէջ կ'ապ-
րեցնէ իր անձերը , զանոնք կը կանգնեցնէ ի-
րենց մէսթերուն եւ արտայայտութիւններուն
իրական սովորականութեանը մէջ : Անոնք իր
առջեւը նկարուելու համար կեցած չեն . ապ-
րած ատենին զանոնք դիտած է , ու արագ
ձեռքով մը անոնց կենդանագիրն է յօրինած .
բայց այդտեղ կանգ չէ առած , ուղած է անոնց
հոգւոյն խորն իջնել . առով է որ իր տիպար-
ները , մասնաւոր տիպարներ ըլլալով հան-
դերձ , ընդհանուր տիպարներ են միանգա-
մայն . իր «բանջարեղէն ծախող կիներ» , մի-
անգամայն բոլոր բանջարեղէն ծախող կիներն
ըլլալով հանդերձ , ճշմարտապէս բանջարեղէն
ծախող սիակ կ'ին մըն է : Նոյնպէս եւ «Թա-

փառելիք» , որուն մէջ կը բարախէ հոգին աշխարհիս բոլոր թափառիկներուն , երէկուաններուն ու վաղուաններուն , անոնց որ «քաւցր Ֆրանսային» ճերմակ արահետներէն կը քալին ինչպէս եւ անոնց որ ուսական գետերու նաւաքարչ ճամբաներէն կ'ընթանան :

Այդ ընդհանրացնելու ձիրքը մին է ամենաթանկագին ձիրքերէն զոր այժմեան արուեստագէտ մը կարենայ ունենալ . Պ. Էտկար Շահին զայն ունի շատ բարձր աստիճանով մը : Նոյն իսկ երբ , ինչպէս փորագրութեանց ուրիշ շարքի մը մէջ , որոնց մէջ Մոնմարթրի , Քարթիէ-Լաթէնի կամ Ռուայեալ փողոցի վալիչուհիներուն տիպարները կը ներկայացնէ , այդ «պառ»երու մէջ կամ սրճարաններու գուրսը նստած ըմպելիք խմող կիներու որոշ տիպարներէն , նոյն իսկ երբ կը մասնաւորէ իր գիտողութիւնը , իր հոգեբանական հասկացողութեան զօրութիւնը , այն արագութիւնն ու նրբութիւնը որով կը գուշակէ բոլոր կեցուածքներն ու , գիմագծերուն տակ՝ մարդկային էակի մը հոգին , ամբողջական մարդկութեան արտայայտումներու կը բարձրացնէ զինքը : «Նրկու սեւահերներ»ուն» , «Հակապատկեր»ին մէջ , ուր կը տեսնենք երկու կին , պառի մը մէջ , մին սեւահեր , միւսը խարտեաչ , «Ժիկոլէթ»ին մէջ , որ սրճարանի մը գուրսը նստած է , «Ֆար Նիենթէ»ին մէջ ուր ա՛յնքան նրբօրէն կը պատկերացնէ կնոջ խոնջ շնորհները , «Սրճարանի մը առջեւ»ին , «Թեննիս խաղացող օրիորդ»ին մէջ , Շահին կ'երեւայ նկարիչ մը իգական ժէսթերու , այժմեան կանացի կոտորուածքներու , հրապուրանքներու , հաղուագիւտ ճապկութիւնով մը : Ի՛նչ փափուկ ու ճշմարիտ արուեստով մըն է որ շրթունքներուն վրայ գիտէ ծածանեցնել հրաւիրող ժպիտները , աչքերուն մէջ՝ խոստացող նայուածքները : Ասոնց մէջ ալ , ճշմարիտ կենդանագիրներ են

զոր կը փորագրէ իր գրոցը . որովհետեւ պ. Էտկար Շահին , ամէն բանէ առաջ , գիմանկարիչ մըն է , բառին ամենէն ընդհանուր իմաստով . Թէ՛ երբ կը նկարագրէ սքանչելի բլանչը «Շաթօ Ռուփ»ին կամ «Նստարանի մը վրայ քնացողներ»ուն , որ այնքան ցաւատանջօրէն կ'արտայայտէ չքաւորութեան խոնջէնքը , սպառուժը , Թէ՛ երբ կը ստորագրէ այդ ըզմայելի էջը , «Հակապատկեր» , զոր կը յիշէի քիչ առաջ . ուր այնքան ներուժ կերպով կ'ապրին գիշերային Բարիզին խորդախուած վալիչութիւնները , ան միշտ է եւ կը մնայ գիմանկարիչ մը , այսինքն կարող ըմբռնելու եւ սեւեռելու մարդկութիւնը՝ իր ամենէն այլազան երեւոյթներուն տակ եւ իր ամենէն տարբեր յայտարարութեանց մէջ :

ԿԱՊՐԻԷԼ ՄՈՒՐԷ

(Շարունակելի)



ԴԱՏԸ

Դատը տեղի չունեցաւ յունուար 17ի օրը , որովհետեւ պ. Քալբաքճեան հիւանդութեան պատճառով չէր կրցած ներկայ գտնուիլ , եւ յետաձգուեցաւ փետրուար 28ին :

Իսկ պ. Իսքէնտէրի բացած դատը պ. Քալբաքճեանի դէմ՝ տեղի պիտի ունենայ փետրուար 2ի օրը :



ՓՐԱՆՔՈ-ԹՈՒՐՔ ՄԻՋԱԴԵՊՈՂ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

— 0 —

Փրանքո-թուրք վէճը փակուեցաւ ասանց, ինչպէս շատ մը եւրոպական ու հայ թերթեր բազմացին ու յուսացին, ու եւ է վճռական հետեւանք ունենալու արեւելեան խնդրոյն համար ընդհանրապէս եւ հայկական խնդրոյն համար մասնաւորապէս: Փրանսական կառավարութիւնը չընդլայնեց վէճը եւ պաշտօնապէս անոր չկցեց հայկական խնդիրը, հակառակ որ ֆրանսական մամուլին մեծ մասը այդ բանը պահանջեց կառավարութենէն: Փրանսական զրահաւորները գացին ու բնմն Միտիլիէ դուտ ֆրանսական մէկ քանի որոշ խնդիրներու համար միայն:

Կարելի չէ սակայն ըսել թէ անոնք որ ֆրանքո-թուրք վէճէն այդպիսի հետեւանքներ սպասեցին, անկարելի երազով մը օրօրուող միամիտներ էին: Փրանքո-թուրք վէճը կրնար ունենալ անելի ընդհանուր եւ աւելի կարեւոր հետեւանքներ, կրնար բանալ արեւելեան խնդիրը, ու շատ մը նշաններ ատոր կարելութիւնը կը շեշտէին այն պահուն ուր այդ յոյսերը յայտնուեցան, այդ յոյսերը օղբ ելան սչ թէ որովհետեւ ֆրանքո-թուրք վէճին պատճառով կազմուած կացութիւնը իսկականօրէն անընդունակ էր այդպիսի յոյսեր ներշնչելու, այլ որովհետեւ եւրոպական պետութիւնները չկըրցան, այս անգամ ալ, համաձայնիլ այդ յոյսերն իրագործելու համար: Յոյսերու այդ վիժուժէն կազեքեալներուն կացութիւնը բարւոքելու գործին նպաստելու տեսակէտով: Անտարակուսելի է որ երբ Սասունի դէպքերուն, Մուշի, Թամղարայի ջարդերուն հետեւանքով կարգ մը ֆրանսացի մեծանուն հայաստէրներ Պ. Տելքասէին ուշադրութիւնը հրաւիրեցին Հայաստանի կացութեան վրայ, Պ. Տելքասէ անտարբեր չգտնուեցաւ դէպ ի հայկական խնդիրը, ուղեց բան մը ընել Հայոց ի նպաստ, յուսալով որ համաձայնութիւն մը կարելի պիտի ըլլար գոյացնել այդ մասին ոուս կառավարութեան հետ, ընդունեցաւ Պ. Բիշեարը եւ իր յօժարութիւնը յայտնեց Հայոց ի նպաստ աշխատելու: Պ. Լամատորֆի հետ ի Բարիզ իր ունեցած տեսակցութեանը մէջ, հայկական խնդիրը յարոյց Գոմբիէնի մէջ, այդ խնդիրը իր նախաձեռնութեամբ նկատողութեան առնուեցաւ, վէճի դրուեցաւ. բայց կ'երեւայ թէ համաձայնութեան մը կարելի չէ եղած յանդիլ ոուս կառավարութեան հետ, — դէպքերը այժմ այս բանը կը ձգտին ապացոյցանել, — եւ կամ թերեւս ալ՝ եթէ տեսակ մը եզրակացութեան յանգած են այդ խորհրդակցութիւնները, այդ եզրակացութիւնը այն չէ զոր կը բաղձայ հայ ժողովուրդը: Ռուս կառավարութիւնը, ինչպէս իրողութիւնները կը թուին այժմ հաստատել, կ'երեւայ թէ չէ հաւանած որ ֆրանքո-թուրք անհամաձայնութեան միջոցին ֆրանքո-ուս գործունէութիւն մը փորձուի՝ հայկական խնդիրը լուծելու համար այն որոշոյն համեմատ որ ներշնչեց 1895ի մեծորանտովը, ոուս կառավարութիւնը յայտնած ըլլալու է որ ինքը կը փափաքի իր ձեռքովը, միայնակ ու իր ուղածին պէս կարգադրել Հայոց խնդիրը, եւ առաջարկած ըլլալու է ֆրանսական կառավարութեան՝ ֆրանքո-թուրք վէճը փակել դուտ ֆրանսական կարգ մը որոշ պահանջումներուն գոհացումն ուղղելով միայն: Իր նոյ 13ի թուով, «Թան»ը, կիսապաշտօնական յօդուածի մը մէջ, շատ յստակօրէն՝ հակառակ կարգ մը դիւանադիւանական մեղմացումներու՝ կը բացատրէր այդ իրերու վիճակը որ Գոմբիէնի տեսակցութենէն ի վեր կազմուած էր. թէպէտ Փրանսայի նաւային ցոյցին հետեւանքով միայն հրապարակուեցաւ. «Պէտք կ'այ յիշեցնել, կ'ըսէր «Թան», թէ մեր ազգեցութիւնը քանի մը տարիէ ի վեր նուազած էր Արեւելքի մէջ: Հայաստանի խնդիրը, հինգ տարի առաջ, տեսակ մը արիւնոտ պայքար էր զոր Անգլիան եւ Ռուսիան կը մղէին իրարու դէմ: Մենք անոր բնաւ չմասնակցեցանք: Մեր զբաղումները մեզի կը մղէին դէպ ի այն շարժումը որ Անգլիոյ մէջ կը յուզուէր ի նպաստ Հայոց, շարժում որուն մէջ կ'առաջնորդէր մեծ ձայնը լսելի ըրաւ: Բայց մեր հաւատարմութիւնը ոուսական նիզակակցութեան՝ կ'անդամալուծէր մեր բարի կամեցողութիւնը, արդէն շատ երկչոտ: Յետոյ Արեւելքի մէջ երեւցաւ անձնական միջամտութիւնը Վիլհելմ Բ. ին որ եկաւ ինքզինքը ներկայացնել Սուլթանին իբրեւ բարեկամ մը եւ իբրեւ պաշտպան մը: Այսպէս, թերեւս աւելի իրերուն բնական բերամբը քան մեր յանցանքովը, մենք բոլորովին երկրորդ աստիճանն ինկանք:

«Սուլթանին սխալն այն եղաւ որ կարծեց թէ Փրանսա ընդունած էր իր ազգեցութեան այդ նուազումը: Թէ Փրանսա, ստիպուած ըլլար նպաստաւոր առիթներու սպասել որպէսզի զգացնէր թէ չ'ուզեր թոյլ տալ որ զինքը անգոյ համարին եւ որպէսզի իր բարոյական շահերուն դէմ դորձուած մեղանշումներուն վերջ դնէր, ատի հասկանալի է վերջապէս: Բայց թէ իր քթին խնդային եւ խոտմաղարձօ գտնուէին իրեն հանդէպ, երբ նոյն իսկ խնդիրը օսմանեան դատարաններէն արդար հաշիւուած գործերու վրայ էր, ա'լ ատի էշուն կրնայ էր, եւ չէինք կրնար հանդուրժել զայդ: . . .»

Բայց ոչ մէկ ազգի ձեռնարկն Արեւելքի մէջ այնքան նախանձոտօրէն չի նկատուիր ուրիշ ազգիքն որքան Պրանսայինը : Ոչ մէկ ազգ այնքան գծուարութեան պիտի չհանդիպէ որքան Պրանսան այն գործողութեան մէջ զոր ձեռնարկեց եւ յաջողուց : Ո՞ւրիկից մեղի խրախոյս կրնար գալ : Ո՞ւրիկից մեղի բարոյական աջակցութիւն կրնար գալ :

Ռուսիայէն : Անշուշտ Ռուսիան ուղղամիտ եւ հաւատարիմ զաշնակից մըն է : Բայց Տաճկաստանի խնդիրը ճիշդ այն միակ կէտը կը կազմէ ուր ռուսական եւ ֆրանսական քաղաքականութիւններն իրար կը սկրդեն : Երբիմ պատերազմէն ի վեր, Ռուսիա ու մ.ն.ք, Միջերկրականի արեւելեան կողմը իրարմէ տարբեր նպատակներու կը հետամտինք : Երկեակ նիզակակցութեան մէջ տիրապետող ամբողջ ամուր կամքը պէտք է, երկու ժողովուրդներուն իրարու վրայ ունեցած ամբողջ բարեկամական վստահութիւնը պէտք է, երկու բարեկամ կառավարութեանց ամբողջ թաքթիքը պէտք է՝ երկու ազգերու միջեւ անհամաձայնութեան մը կամ պարզ թիւրիմացութեան մը առաջին առնելու համար : Որովհետեւ գիտենք ամէն բան իր անդը գնել, կերպով մը ամէն տեսակ շահերն աստիճանաւորել եւ մեր ջանքերն իմաստօրէն չափել, ատոր համար է որ կրցանք մեր ազգեցութիւնը վերահաստատել Արեւելքի մէջ :

Յոյսը որ կազմուեցաւ կարգ մը մտքերու մէջ՝ ֆրանքո-թուրք վէճին ու ֆրանք-օռուս սեսակցութեան առիթով, բացարձակ ինքնավարութեան մը Հայաստանի մէջ յանկարծական հաստատումը չէր պիտի լինէր : Այդպիսի բանի մը իրականացման վրայ — ասի միշտ պէտք է կրկնել — այն ասն կրնանք վստահօրէն յոյս դնել, երբ մենք իսկ մեր ուրոյն ուժովը պարտաւորենք զիւսնազիտական Եւրոպան նաւերագործել այդ նոր կացութիւնը զոր մեր ճիշդ ստեղծած պիտի ըլլայ : Յուսացումը այն էր որ ֆրանսական կառավարութիւնը պիտի օգտուէր թուրք կառավարութեան հետ խզման պարագայէն եւ իր մասնաւոր պահանջումներուն հետ պահանջէր նաեւ թուրքիոյ Հայոց գէմի գործ կրուած սիւսեմական հալածանքին վերջնական դադարումն եւ գործադրութիւնն այն մէկ քանիէ տակաւ անհրաժեշտ բարենորոգումներուն որո՞ք ց՞ի մեմօրանտումին մէջ նշանակուած էին : Անոնք որ այս յոյսը սնուցին, չէին անդիտանար որ Պրանսան միայնակ անկարող էր այդպիսի պահանջման մը անմիջական ու ամբողջական գոհացումը ստանալ, եւ գիտէին նաեւ թէ ներքին ալ չէ միմիայն Պրանսայէն սպասել որ լոկ իր ուժերովը լուծէ այդ կեճոտ խնդիրը որուն մէջ պարտականութիւն աստանձնած են Պերլինի դաշնագիրն ստորագրող վեց պետութիւնները միանգամայն : Սպասուածն այն էր որ պ. Տելքասէ, կրթնելով ֆրանսական հանրային կարծիքին վրայ որ այդ միջոցին այդ իզմը կը յայտնէր միանամուտ, պիտի յաջողէր Քոմբէէնի տեսակցութեան մէջ, ազդել ուսս կառավարութեան վրայ, հատուկ վայն թէ վայրկեանը եկած է Տաճկաստանի մէջ տիրող այլադակ իրերու վիճակին վերջ դնելու, եւ պիտի կարենար մղել ուսս կառավարութիւնը որ ֆրանսականին միանար հրաւիրելու Պերլինի դաշնագիրն ստորագրող վեց պետութիւնները ձեռնարկել կորովի գործունէութիւն մը այդ դաշնագրին Տաճկաստանի վերաբերող յօդուածները գործադրելու համար : Անոնք որ այդ յոյսերը կը տածէին, գիտէին որ Ռուսիա իր ուրոյն ծրարներն ունի Տաճկաստանի ապագային համար եւ մանաւանդ Հայոց խնդրոյն մէջ, բայց կը կարծէին թէ այս միջոցին՝ ճայրայիշօրէն զբաղած Մանչուրիոյ մէջ, ան պիտի չընդդիմանար թուրքիոյ Հայոց կացութեան բարեօրումին համար եւ ջանքերու : Պ. Քոչէն կը կարծէր — ինչպէս որ ըսաւ նոյն կի նիստին ճառին մէջ — թէ որպէսզի Գերմանիան Ռուսիան հանգիստ թողու Մանչուրիոյ մէջ, Ռուսիա համաձայնած էր Գերմանիան ապա թողու Փոքր-Ասիոյ մէջ, իր Պաղտատի երկաթուղիին համար մանաւանդ, ու կը մտածէր թէ Պրանսա որ ատոր դրամազլխին մէկ կարեւոր մասը զրած է, կրնար Գերմանիան համոզել որ նոյն իսկ այդ երկաթուղիին ապագային, նոյն իսկ Եւրոպայի բոլոր նիւթական շահերուն համար, անհրաժեշտ էր Տաճկաստանի մէջ — եւ մանաւանդ Տաճկաստանի ամենէն «հիւանդ» մասերուն մէջ, ինչպէս է Հայաստանը — մացնել այն բարենորոգումները զոր Պերլինի դաշնագիրը պայմանագրած էր : Բ. պ. Լավիս, «Ռեվիւ աը Բարի» յօդուածին մէջ որ Չարին Քոմբէէնը հասնելէն քիչ առաջ երեւցաւ, յտակօրէն յայտնելէ յետոյ թէ 1895ին Հայաստանի բարենորոգմանց անգործադրութեանը պատճառը Ռուսիան էր, անուղղակի կերպով կը զգացնէր թէ անկից ի վեր Երկեակ նիզակակցութեան յարաբերութիւններն աւելի մտերմական ու սերտ դարձած ըլլալով, Ռուսիան թերեւս այժմ զոհողութիւն մը պիտի ընէր իր դաշնակցին՝ հայկական խնդրոյն մէջ :

Այդ յոյսերը չիրականացան : Ռուսիա կ'ուզէ միշտ Տաճկաստանի կեանքն ու մահը իր ձեռքն ունենալ, եւ իր ձեռքը միայն : Պրանսական նաւային ցոյցին ատեն, երբ Պրանսա իր զուտ ֆրանսական պահանջումները կը ներկայացնէր Սուլթանին, պ. Ջինովիէֆ քանիցս Սուլթանին ներկայացուց շատ խիստ սոճով նօթեր Հայաստանի կացութեան մասին : Երբ 1895ին Անգլիա ուզեց իր ձեռքովը կարգադրել հայկական խնդիրը, Ռուսիա քայքայեց Անգլիոյ ամբողջ ճրագիրը, եւ նոյն իսկ բրտօրէն հակահայ ընթացք մը բռնեց եւ ատով ջարդերուն կատարումը խրախուսեց : Եւ այդպէս ըրաւորովին

տեւ Անդրիա կ'ուզէր հակառակ Ռուսիոյ իրագործել իր ծրագիրը, եւ որովհետեւ Հանութոյն դան-
 լիճն ալ Լոպանովի Ռուսիային հետեւեցաւ ստրկարար այս անգամ, եթէ Ֆրանսական կառավարու-
 թիւնը հրաւիրեց Ռուսիան որ միասին նախաձեռնութիւնն առնեն հայկական խնդրոյն լուծում մը
 տալու, Ռուսիա յայտարարած ըլլալու է որ ինքը կ'ուզէ այդ խնդիրն իր ուրոյն ծրագրերնորուն հա-
 մեմատ լուծել, բայց այս անգամ Ռուսիոյ ընթացքը հանդէպ Հայոց չունեցաւ այն սուր հակակրու-
 թիւնը զոր ունէր Լոպանովի օրով, (եւ այդ երեւոյթին մէջ, շատ մը պատճառներու հետ, պ. Տելքա-
 սէի ազդեցութիւնն ալ գեր մը կատարած կրնայ ըլլալ)։ Ֆրանսայի թոյլ չտալով հանդերձ որ իր պա-
 հանջներու կարգն անցնէ հայկական խնդրոյն լուծումը, Ռուսիա իր ընթացքով ցոյց տուաւ թէ որո-
 շած էր այլեւս ինքն ուզողի միջամտել Հայոց խնդրոյն, պ Ձինովիէֆի նօթերն ատոր ապացոյց-
 ներն եղան։ Ուրիշ ապացոյց մը յանկարծական ու կտրուկ լուծումը եղաւ Կովկաս ապաստանած
 40000 թրքահայ փախստականներու խնդրոյն, որ չորս տարիէ ի վեր կը ձգձգուէր։ Ռուս կառավա-
 վարութիւնը յայտարարեց որ անոնցմէ Տաճկաստան դառնալ ու զոհներուն ապահով զարձին պիտի օգնէ,
 իսկ մնալ ուզողները Ռուսահայաստակ պիտի նկատէ եւ անոնց տեղաւորմանը պիտի նպաստէ։ Այս բո-
 լորը անշուշտ բնութիւն չունի Տաճկահայոց խնդրոյն լուծմանն առաջնորդելու՝ այնպէս ինչպէս
 իրենք կ'ըմբռնեն զայն, մանաւանդ որ կարգ մը Ռուս թերթեր 40000 փախստականի հարցին կար-
 դադրութիւնը բացատրեցին շատ զգուշիկ եւ Հայոց համար շատ անախորժ եղանակով մը։

«Այն դերքը կը գրէր «նովոյէ Վրեմիա», զոր Ռուս կառավարութիւնը մտադիր է բռնել հայկական
 խնդրոյն հանդէպ, հետզհետէ աւելի որոշ կերպով կը սկսի երեւան գալ։

« Իսնի քանի անգամ Կովկասի կառավարութիւնը փորձած էր վրայէն նետել հայ փախստական-
 ները որ 1895ի եւ 1896ի ջարդերուն հետեւանքով թուրքիոյ մէջ իրենց ունեցած բնակավայրէն
 ստիպուած էին հեռանալ։ Արդ, Կովկասի մէջ հայ տարրի նոր ներմուծում մը ազէկ աչքով չի տես-
 նուիր, որովհետեւ տեղական բնակչութիւնը Հայոց նկատմամբ ցոյց կուտայ զգացումներ նման այն
 զգացումներուն որ մեր մէջ հակասեմականութիւնը կը բնորոշեն, եւ որովհետեւ այդ ապրուստի
 ո եւ է միջոցէ զուրկ հազարաւոր փախստականներու պահպանումը շատ ծախքի եւ վարչական տաղտ-
 կութեանց առիթ կուտայ։ Հայկական բարեգործական ընկերութիւնները վերջին ծայր սահմա-
 նափակ արտօնութիւններ ունին, որովհետեւ կը վախճուի որ անոնք շատ զիւրաւ քաղաքական եւ
 ազգայնական ընկերութիւններու կը փոխուին։ Արդ, մինչդեռ Ռուսական կառավարութիւնը փա-
 խստականներուն թուրքիա դառնալը կ'ուզէ, Հայերը բնաւ փախաքող չեն դառնալու (?), եւ արդէն
 թուրք հիւպատոսներն ալ գրեթէ միշտ կը մերժեն անցագիր տալ անոնց։

«Այս կացութեան հանդէպ, Ռուս կառավարութիւնը, վերջ մը դնելու համար այս անգոհացու-
 ցիչ իրերու վիճակին, ամենամեծ կարեւորութիւն ունեցող որոշում մը տուաւ։

«1902 փետրուար 28էն սկսեալ Ռուս հողի վրայ գտնուող բոլոր հայ փախստականները Ռուսահը-
 պատակ պիտի նկատուին, եւ պիտի տեղաւորուին իրրեւ երկրագործ կայսերական կալուածներու
 վրայ։ Տասը տարի յետոյ պիտի կարող ըլլան սոսկական հողաստացումքի տիրանալ, եւ այն ատեն
 զինուորական ծառայութեան ալ պիտի կոչուին՝ Ռուսերու պէս։

«Հայկական խնդիրը, այն սահմանին մէջ որ Ռուսիոյ հետ անմիջական կապ ունի, այս որո-
 շումով լուծուած կը թուի։ Ռուսերն ու Հայերը այս որոշումէն գոհ կ'երեւան (?)։ Այն Հայերը որ
 թրքական լուծը չեն հանդուրժիր, Ռուս պիտի ըլլան այլեւս։ Ռուսիան ատով կը շահի հաղարարոր
 բազուկներ որոնց բացարձակապէս պէտք ունի Կովկասը, այնքան բերրի ու այնքան քիչ բնակուած,
 յորմեկտէ անխորհրդարար թոյլ տուին որ Տուխսպուրները, որոնք անզուգական երկրագործներ էին,
 Քանաոս գաղթեն։ Թուրքիոյ կուրծքին վրայէն բեռ մը պիտի պակսի (!), եւ փախստականները պի-
 տի կարողանան, վախառութեան համար իրենց յարումը թողլով (!), բարեկեցիկ եւ օգտակար գիւղա-
 ցիներ դառնալ, ինչպէս՝ Ռուսական հողին վրայ տեղաւորուած այնքան ուրիշ ալգաբնակութիւններ ։»

Արդ, թրքահայոց իտէալը Ռուսահայաստակ ըլլալը չէ, Ռուսահայաստակ ըլլալով, Հայը անհատա-
 կան հանգստութիւն, օրէնքի առջեւ հաւասարութիւն կը վայելէ, եւ փոքր բարիք մը չէ այդ ան-
 շուշտ։ Բայց իր ազգային անհատականութիւնը ծանր վտանգի մը կրնայ ենթարկուիլ եթէ այն մի-
 ջոցները որ Աշխատանք Գ. էն ի վեր ձեռք կ'առնուին Ռուսիոյ Հայոց դէմ՝ շարունակուին, եւ ատի
 շատ մեծ շարիք մըն է, մեծագոյն շարիքն է։ Ռուս զիւրանազէտներուն կամ համասլաւականներուն
 ջիղերը ոտքի կ'ելլեն երբ Հայերը ազգայնական ձգտումներ ցոյց կուտան. արդ, Ռուսիան է որ, բաս-
 քովիչ զօրավարին օրով, արարատեան նահանգին մէջ հայկական թագաւորութեան մը ծրագիրը
 խմբագրեց՝ համաձայնութեամբ Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսին, եւ այդպիսի յոյսեր ներշնչելով
 Հայոց օգնութիւնը վայելեց Պարսից դէմ իր մղած պատերազմին մէջ յաղթական ելլելու համար։

այսօր Հայերը թագաւորութիւն մը չէ որ կ'երազեն կանգնել Վանի կամ Էրզրումի մէջ, կ'ուզեն միայն ունենալ վարչական ինքնավարութիւն մը, որ իրենց թոյլ տայ զարգանալ իբրև ազգութիւն եւ իբրև անհատ: Անկարելի, անիրագործելի բան մը չէ ասի, եւ ոչ ալ ուսուսական վիժխարի պետութեան դէմ ունէ վտանգ կրնայ բերել այդ ծրագրին իրականացումը: Ընդհակառակն, եթէ Ռուսիա անկեղծօրէն օգնէ Հայոց այդ բողձանքին իրագործման, բոլոր Հայերուն համակրութիւնն իրեն կը շահի, եւ Ռուսիա գիտէ՝ աւելի քան ուրիշ ունէ պետութիւն՝ թէ Հայերը զանցառելի քանակութիւն մը չեն: Այս բոլոր տեսակէտներով է որ նպատակայարմար եւ ուշիմ թուեցաւ ինծի Հնչակեան կուսակցութեան միաժամանակ դիմումը ուսուս. ֆրանսական կառավարութեանց, դիմում որով չէ թէ պ. Չերազին պէս «ուզածդ ըրէ մեզի» կ'ըսէին Չարին ու «հայ եկեղեցին օրթոտոքս եւ կեղեցւոյն մէկ ճիւղը» համարելու չափ կը ստրկանային, այլ կը յիշեցնէին Ռուսիան, — ինչպէս եւ Ֆրանսային — որոշ պարսֆը զոր անոնք ունին Հայոց հանդէպ, բազմաթիւ հանդիսաւոր յանձնառութիւններու հետեւանքով, ուսուս կառավարութիւնը սպասուած պատասխանը չտուաւ Հայոց կոչին: Բայց իր ընթացքին մէջ ջնջուած տեսանք այն մտիզին հակակրութիւնը զոր Լոպանֆի ատեն ցուցուց: Ռուսիա յայտարարեց հանդիսաւորապէս թէ չ'ուզեր որ Հայերը ջարդուին, հալածուին, կողոպտուին, ասի նշանակելու կէտ մըն է, որ կրնայ յարաբերական գոհունակութիւն մը առթել, որովհետեւ Ռուսին յիստամական տառապանքները ամենէն անկ վտանգն է Հայուն համար, եւ անոր բնաջնջումը փութացնող մեծագոյն սատարը: Հայերը կրնան, ու շահ ունին, միշտ շարունակել ինչ որ Չանչեան սկսաւ, այսինքն ջանքեր ընել ջնջելու համար Ռուսին Հայոց հանդէպ հակակրութիւնը, — որ արդէս տնիմաստ, նոյն իսկ ուսուսական տեսակէտով սխալ բան մըն է, — անոնց սակայն մեր ազգային ծրագրէն նշանախեց մ'իսկ զոհելու:

Այս պայմաններուն մէջ, պ. Տելքասէն դժուար է մեղադրել եթէ չիրականացուց այն յոյսերը որ իր վրայ դրուած էին: Պ. Տելքասէ Բոմբէնի խորհրդածութեանց մէջ Հայոց հարցն ալ յարուցած է, բայց դէպքերը կը ձգտին ցոյց տալ թէ չէ յաջողած համաձայնութիւն մը գոյացնել ուսուս կառավարութեան հետ՝ այն հիմունքին վրայ որով Հայերը կ'ուզեն իրենց խնդիրը լուծուած տեսնել, Բայց կարելի է մեղադրելի գտնել որ պ. Քիյեարին ու Վոամչապուհ քահանային շնորհած ունկնդրութիւնը թոյլ տուած ըլլայ հրապարակել, քանի որ ապահովութիւն չունէր թէ վճռական քաջ մը կրնար առնել հայկական դատին լուծման համար: Բայց ատկից չեմ կարծեր որ իրաւունք ունենանք հետեւեցնելու որ պ. Տելքասէ այդպէս վարուած, ըլլայ՝ պարզապէս հայկական խնդիրն իր Սուլթանին հետ ունեցած մասնաւոր հարցերուն լուծումը փութացնելու համար շահագործելու նըպատակով, պ. Տելքասէն չէ որ կանչած է պ. Քիյեարը կամ Վոամչապուհ քահանան, այլ ընդունած է զանոնք՝ երբ ունկնդրութիւն խնդրած են, ինքը չէ որ լրագիրներուն զրկած է զանոնք ընդունած ըլլալը ծանուցանող լուրը, այլ զայն հրատարակելու անոնց փափաքին չէ ընդդիմացած:

Բայց ինչ որ իբրև քննադատելի է պ. Տելքասէի մէջ, իր նոյեմբեր 4ի ճառն է: Այդ ճառը համապատասխան չէր կացութեան, եւ այն զգացումներուն զոր այդ կացութիւնը ստեղծած էր ֆրանսական հասարակութեան մէջ: Պ. Տելքասէ ծայրայեղօրէն ծանրացաւ Լորանտոյի, Թուպինի եւ քարափներու խնդրոյն վրայ, երկարօրէն ջանաց բացատրել թէ այդ խնդիրները կ'արժէին որ անոնց համար ֆրանսական կառավարութիւնը յարաբերութիւնները խզէր թուրք կառավարութեան հետ: մինչդեռ այնքան բնական էր եւ այնքան անհրաժեշտ որ յայտարարէր թէ այդ խնդիրները, որոնք վերջապէս ինքնին շատ սահմանափակ կարեւորութիւն մը ունէին, ջրի կաթիլը եղած էին որ առիթ գաւաթը կը յորդեցնէ, եւ թէ նաւային ցոյցին բուն պատճառը այն բոլոր շնականօրէն խոստմադրութեւ ահուկիօրէն հակամարդկային, հակաքաղաքակրթական ընթացքն էր զոր Սուլթանը կ'ունենար երկար ատենէ ի վեր, ջարդելով այն ժողովուրդները որոնց վիճակը բարւոքել խոստացած էր Եւրոպային, ամէն առթիւ պարտազանց ու խարդախ գտնուելով Եւրոպային հանդէպ, քաղաքական, առեւտրական ամէն խնդիրներու մէջ (1): Խորհրդարանը, սրտնեղած՝ Թուպինիի, Լորանտոյի

(1) Նոյեմբեր 4ի ճառն վրայ պ. տը Պլովից, որ մեծ համակրողներէն մէկն է պ. Տելքասէի, հետեւալ կարծիքը կը յայտնէր «Թայմզ»ին մէջ. «Ամենայն անկեղծութեամբ կ'ըսեմ, եւ թող պ. Տելքասէ ներէ ինծի: Պ. Տելքասէ ոչինչ աւելցուց (այդ ճառով) իր պետական մարդու համբաւին ու մանաւանդ իր վայելած վարկին: «Պ. Տելքասէի ունկնդիրները ապշած մնացին, եւ անոնց հետ Ֆրանսան ու ամբողջ աշխարհ: Ակներեւ է որ այսօր կրանէի, Լորանտոյի, Թուպինիի խնդիրները երկրորդ կարգն իջած են եւ թէ արդէն ունէ ատեն անոնք չեն ներկայացուցած կարեւորութիւն մը որ նաւային ուղարկ մը արդա-

նուիրուած այդ չափազանց եւ տարամերժ հոգածութենէն, նախարարը բռնադատեց բացատրութիւն տալու բուն խնդրոյն, հայկական խնդրոյն վրայ, այն խնդրոյն որուն համար կ'ուզէր որ նաւային ցոյցը կատարուած ըլլար: Պ. Տեղքասէ պատրաստուած չէր այդ օրը հայկական խնդրոյն վրայ բացատրութիւն տալու. որոշած էր որ նոյ. 15ի օրը պիտի տար այդ բացատրութիւնը՝ պատասխանելով պպ. Ռուանէի եւ Քոչէնի հարցապնդումին, բայց պ. պ. Սանպա եւ Քոչէն կցեցին իրենց հարցապնդումը պ. Ալմանի հարցումին, Սորհրդարանը միաձայն բացատրութիւն պահանջեց Հայոց խնդրոյն վրայ. եւ պ. Տեղքասէ, յանկարծակիի եկած, ըսաւ կարգ մը բաներ որոնք հակասական էին, կցկտուր, մասամբ անճիշդ ու մեր գատին վնասակար: Նախ պ. Տեղքասէ, խոստովանելով հանդերձ Հայոց դէմ թուրք կառավարութեան ուղղած «մասնաւոր» հալածանքը, ջանք մը ցոյց տուաւ թրքական Հայաստանին մէջ տիրող կացութեան արհաւիրքը մեղմացնելու. «Մուշի մէջ ջարդի մը լուրը հերքուած է» ըսաւ. մինչդեռ դժբաղդաբար իրական էր որ 300 հայ ջարդուած են Մուշի մէջ, ինչպէս եւ անկէց առաջ՝ ասանուչորս գիւղ մէկանց ջնջուած են Քամզարայի մէջ: Յետոյ պ. Տեղքասէ կրկնեց անճիշդ տեսութիւն մը զոր Սուլթանն ստեղծած է. «Արեւելքի այդ մասը, ըսաւ, անպատշաճօրէն Հայաստան կուչուած է, քանի որ իրօք հայկական համախմբում չկայ ոչ մէկ տեղ, եւ Հայերը կը գտնուին Փոքր-Ասիոյ հարիւր կէտերուն վրայ առանց մեծամասնութիւն մը կազմելու», արդ, Փոքր Ասիոյ մէջ կան մէկէ աւելի կէտեր ուր հայկական մեծամասնութիւն մը կը տիրէ. դիւանագիտութեան պարտքն է տեսնել այդ կէտերը եւ անոնց վրայ կեդրոնացնել բարենորոգմանց իրազորումը. պ. Տեղքասէ պէտք էր չմտնար արդէն որ վերջին ռուսօ-թուրք պատերազմէն յետոյ թուրք կառավարութիւնը հայկական նահանգներու սահմանները փոխեց, զանոնք խառնելով մահմետականներով բնակուած նահանգներու հետ, որպէսզի հայկական մեծամասնութիւնը արուեստականօրէն նուազի. եւ եթէ ջարդերէն ի վեր Հայերուն մեծամասնութիւնը իրօք ծանր հարուած մը կրած է, կարելի՞ է ատի Հայոց մեղադրել: Փոքր Ասիոյ այդ մասը շատ պատշաճօրէն Հայաստան կը կոչուի, որովհետեւ դարերէ ի վեր հայ ցեղն է որ կը տիրէ, կը կռուի, կը տառապի, կ'ապրի, կ'աշխատի հոն, հայ ցեղն է որ լեռները, քաղաքները, հովիտները, լճերը անուանակոչած է, հայ ցեղն է որ մինչեւ այսօր բարոյապէս տէրն է այդ երկրին, հոն գտնուող ցեղերուն մէջ ամենէն աւելի աշխատասէրը, արտադրողը, քաղաքակիրթն է եւ ուրոյն վարչութիւն մը ունենալու ամենէն արժանին, ան է որ պէտքն զգացած է բարենորոգմանց եւ Եւրոպայի դիմած է եւ յաջողած է իր ձայնը լսելի ընել եւ 61րդ յօդուածն ընդունիլ որ Հայոցմէ բնակուած նահանգներուն համար մասնաւոր բարենորոգումներու անհրաժեշտութիւնը կը հռչակէ. եւրոպական դիւանագիտութիւնը այլեւս իրաւունք չունի ազ խնդրոյն վրայ վէճ յարուցանել, քանի որ Եւրոպա պաշտօնապէս ընդունած է Պերլինի դաշնագրով եւ 95ի մեծորանտով, որ թուրքիոյ Հայոց «մասնաւոր» բարենորոգումներ պէտք է որ չնորհ: Ինչ, եւրոպական դիւանագիտութիւնը պարտք ունի միայն իր որոշածը, իր խոստացածը իրագործել եւ արդէն պ. Տեղքասէ ինքիւրեն կը հակասէ երբ քիչ յետոյ կ'ըսէ թէ «Ճշմարիտ է որ 1895ին եւ 1896ին (95ին ըսել կ'ուզէր) նախատեսուած բարենորոգումները անկեղծօրէն չեն գործադրուած. ճշմարիտ է թէ քրիստոնեաները չունին, այդ նահանգներուն մէջ, այն կացութիւնը որոնց իրաւունք ունէին իրենց թուոյն պատճառով, ճշմարիտ է որ Հայերը մասնաւոր մասնաւորապէս խիստ վարժուողի մը կ'են-

բացնէ: «Հակառակ ատոր պ. Տեղքասէ իր ճառին եւ իր պերճախօսութեան մեծագոյն մասը յատկացուց այդ երեք խնդիրներուն զորոնք ներկայացուց իբրև կառավարութեան բռնած դերքին գրգռչ պատճառը:

«Անպիճելի է որ Եւրոպա չի կրնար ընդգրկել այդպիսի վէճ մը եւ թէ նոյն իսկ Ֆրանսան չի կրնար իրօք զայն մեծ խանդավառութեամբ մը նկատել:

«Կրանէի, Լորանտոյի ու Թուպինիի անուններուն հանդէպ մարդ ուսերը թօթվելէ ուրիշ բան չի կրնար ընել, եւ եթէ Ֆրանսա ատկից ուրիշ ոչինչ ունի իր արարքն արդարացնելու համար, կարելի է ըսել թէ «օպերիօք»ը վեր վերցուցին ճանճ մը ճզմելու համար:

«Անհնար է որ պ. Տեղքասէ չունենայ խորհրդաւոր յատկապիժ մը, զոր մտադիր է մեզի յայտնել՝ երբ զայն գործադրել սկսի. եւ կամ պէտք է ենթադրել թէ նաւատորմը զրկած է վերջ մը դրնելու համար անճարակօրէն պատրաստուած կացութեան մը եւ թէ տակաւին վերջնապէս չէ որոշած այն սխառմը զոր պիտի ընդգրկէ արդարացնելու համար՝ յայտ Եւրոպային՝ այն ծանրակշիւ որոշողութիւնը զոր առաւ եւ այդ ցոյցը որու պատասխանատուութիւնն ստանձնեց:

«Յուշանք որ պ. Տեղքասէ պիտի նորէն ձեռք ձգէ ինչ որ կորսնցուց ներկայ պարպաներուն մէջ, եւ թէ իր հեղինակութիւնը պիտի չնուազի ատով, որովհետեւ եթէ ան նուազէր, ատի վնասակար պիտի ըլլար բովանդակ Եւրոպային, որ մեծապէս պէտք ունի որ Ֆրանսան յաջող կերպով նուրս ելլէ Սուլթանին հետ ունեցած այս պայքարէն: »

Թարկուին, եւն «ԾԻ բարենորոգումները զոր կը յիշէ պ. Տեղբասէ, միւսիսյն Հայոց կացութիւնը բարւոքելու, Հայոց «մասնաւոր» վարչութիւն մը շնորհելու կը ձգտէին. ուրեմն հայ տարրը մեծա- մասնութիւն կը կազմէր Հայաստանի մէջ՝ կամ գոնէ երկրին կարեւորագոյն տարրը կը համարուէր քանի որ եւրոպական զիւանագիտութիւնը Թուրքիոյ հայաբնակ նահանգներուն համար «մասնաւոր վարչութիւն» մը ծրագրեց: Պ. Տեղբասէ անձիշդ բան վը կ'ըսէ դարձեալ՝ Փոքր Ասիոյ այդ մասին մէջ «քրիստոնեաներու ընդհանուր կացութիւնը» նախ յիշելով, եւ յետոյ Հայոց վիճակը մասնաւորելով, որպէս թէ Հայաստանի մէջ Հայերէ ուրիշ բազմաթիւ քրիստոնեաներ ալ ըլլային, եւ որպէս թէ Պերլինի դաշնագրին ՅԱրդ յօդուածին մէջ Հայոցմէ զատ ուրիշ քրիստոնեաներու մասին խօսք մը ըսուած ըլլար: Պ. Տեղբասէ շատ թեթեւցուցած եղաւ Սուլթանին խոստմնազանցութիւնը յայտարարելով թէ «ԾԻ բարենորոգումները անկեղծօրէն չեն իրագործուած», մինչդեռ անոնք ոչ միայն ընտրուած չեն իրագործուած, այլ եւ անոնց տեղը կոտորածներ անգի ունեցած են, ինչ որ ճիշդ հակառակն է բարենորոգումին (ինչպէս պիտի ըսէր պարոն ար Լաբալիս): Վերջապէս պ. Տեղբասէ անձիշդ բան մը ըսաւ հետեւեալ յայտարարութիւնն ընելով. «Բայց ճշմարիտ ալ է որ իրարու քով գտնուող եւ յաճախ իրարու թշնամի եւ ոչ մին մեծամասնութիւն կազմող ցեղերու պէսպիսութիւնը տարօրինակ է կը կ'ընտանէ վարչութեան գործը, եւնթաղելով որ վարչութիւնը ուզէր օրինաւորապէս կատարել իր գործը: Այդ բոլոր ցեղերուն իրաւունքներուն գոհացում տալու, զանոնք բոլորն ալ պաշտպանելու համար, պէտք էր որ գոյութիւն ունենար ուժ մը՝ ամենուն ալ ինքզինքը յարգել տալու կարող: Թուրքիոյ շահը կը պահանջէ որ ցոյց տայ թէ այդ ուժն ունի:» Պ. Տեղբասէ ասով կ'այլափոխէ ՅԱրդ յօդուածին պարունակութիւնը. այդ յօդուածը այլապէս յեղերու հաւասարութիւն չի խոստանար, այլ Հայոց համար մասնաւոր բարենորոգումներ (1): Իսկ պ. Տեղբասէ շատ լաւ գիտէ որ Թուրք կառավարութիւնը չունի եւ չպիտի ունենայ ոչ ուժը, ոչ ալ կամքը մասնաւոր, ՅԱրդ յօդուածին եւ ԾԻ մեմորանտումին նշանակած բարենորոգումներն իրագործելու. այդ ուժը եւրոպական պետութիւններն են որ ունին եւ անոնց պարտքն է, անոնց գործն է այդ իրականացումն ի գլուխ հանել:

Պ. Տեղբասէ իրաւունք ունէր ըսելու իր ճառին եզրակացութեան մէջ, թէ Փրանսա միայնակ անկարող է այդ գործը կատարելու, եւ թէ այդ գործին կատարման պարտքը իր ուսերուն վրայ միայն չի ծանրանար. բայց իրաւունք չունէր տկարացնելու, այլափոխելու եւրոպայի վեց պետութեանց հաւաքական ստորագրութեամբը վաւերացուած դաշնագրի յօդուած մը որ Թուրքիոյ Հայոց մասնաւոր բարենորոգումներ կը խոստանայ:

Կը կարծեմ թէ պ. Տեղբասէ այդ մեղմացումներուն առաջնորդուած է որպէս զի չօրօրէ Հայերը յոյսերով գործնք շատ դժուարաւ իրականացի կը նկատէ թերեւս, գործնք մասնաւոր ըստ իրեն՝ Փրանսան չի կրնար իրականացնել միայնակ: Բայց այդ պարագային մէջ ալ, լաւագոյն էր որ պ. Տեղբասէ, Փրանսայի միայնակ գործելու անկարողութիւնը բացատրելով հանգերձ՝ հայկական դատին հիմունքը խախտող բաներ չըսէր: Լաւագոյն էր որ որոշապէս խոստովանած ըլլար եւրոպային պարտքը Հայոց հանդէպ, եւ կոչում ընէր Պերլինի դաշնագրին ստորագրող միւս պետութիւններուն որ այդ պարտքը կատարելու համար համաձայնին վերջապէս: Այդպէսով աւելի զօրութիւն եւ յստակութիւն պիտի ստանային իր ճառին այն բոլոր մասերը ուր կեղեքուած Հայերուն նկատմամբ իր համակրութիւնը, անոնց տառապանքները թեթեւցնելու համար իր անկեղծ ջանքերն յիշեց:

(1) Այդ տեսակէտով պ. Չերազ շատ սխալ ու վնասակար յայտարարութիւն մըն է որ կ'ընէ իր թերթին վերջին թիւին մէջ հետեւեալն ըսելով. «Ինտել կուտանք թէ (Հայերը) պէտք չունին մեծամասնութիւն մը կազմելու՝ իրաւունք ունենալու համար այն բարենորոգմանց զոր կը խնդրեն: Իրենք Թուրք կամ քիւրտ հայրենակիցներուն վրայ տիրապետութիւնը չէ որ կը պահանջեն, այլ հաւասարութիւնը անոնց հետ, ձիւղ փոքրամասնութիւն կազմելուն համար է որ պէտք ունին եւրոպայի պաշտպանութեան՝ ընդդէմ գիրենք կեղեքող մահմետական մեծամասնութեան:» Հայկական դատին հայ ախոյեան մը իրաւունք չունի Տաճկաստանի մէջ ընդհանուր բարենորոգումներ պահանջելով, օրէնքի առջեւ հաւասարութիւն միայն խնդրելով բաւականապէս. եթէ Հայոց պահանջն այդ ըլլար լոկ, պէտք էր որ Նրիտանացի Թուրքիոյն հետ միանային եւ անոնց հետ ամբողջ Տաճկաստանի բարենորոգմանը աշխատէին. հայ ժողովուրդը կ'ըզձայ իր երկրին մէկ յարմար կեդրոնին մէջ ունենալ վարչական ինքնօրինութիւն մը. եւրոպան ԾԻ մեմորանտումով Հայոց այդ բաղձանքը ընդունելի եւ գործադրելի գտաւ: Աններելի է որ հայ գործիչ մը այդ ծրագրէն ստորակէտ մը ջնջուելուն համակարծիք ցուցընէ ինքզինքը:

Այդ ճառը սակայն չենք կրնար, — դոնէ առ այժմ — պ. Տելքասէի վերջին խօսքը նկատել . եւ ինչ որ պարտք ունինք ըսելու, այն է թէ պ. Տելքասէն, իբրև դիւանագէտ եւ իբրև մարդ, իր այդ ճառէն չէ որ կարելի է դատել : Պ. Տելքասէ աւելի բան ըրած է Հայոց համար քան ինչ որ ը- ճառէն : Մեր պարտքն է բողոքել այդ ճառին այն մասերուն դէմ որ սխալ են եւ վնասակար մեր դատեցաւ մէկը որ նոյն խիւ Հանօթօն նախընտրելի գտաւ, — անիրաւութիւն մը գործած կ'ըլ- լան . Հանօթօ յայտնապէս հայատեաց էր . պ. Տելքասէ բարի տրամադրութիւններով լեցուն է դէպ ի թիւններ, որ թեթեւ մարդիկ չեն, եւ ինչպէս կը հաստատեն իր կարգ մը գործերն ալ անցեալին մէջ, — եւ ասի նկատողութեան անուելու կէտ մըն է, երբ մանաւանդ մտածենք թէ հայկական դատին — եւ ասի նկատողութեան անուելու կէտ մըն է, երբ մանաւանդ մտածենք թէ հայկական դատին — եւ ասի նկատողութեան անուելու կէտ մըն է, երբ մանաւանդ մտածենք թէ հայկական դատին — եւ ասի նկատողութեան անուելու կէտ մըն է, երբ մանաւանդ մտածենք թէ հայկական դատին — եւ ասի նկատողութեան անուելու կէտ մըն է, երբ մանաւանդ մտածենք թէ հայկական դատին —

Իր առած հայասիրական քայլերուն նկարագիրը զայդ ցոյց կուտայ, ինչպէս մէջ, եւ քիչ անգամ, ու շատ երկչոտ կերպով աւելից անդին անցած է : Բայց տարօրինակ պէտք չէ գտնել իր հայասիրութեան այդ սահմանափակութիւնը, եթէ նոյ. Կի նիստին, նոյնինքն Հայոց դա- տը պաշտպանող Մարսել Սանպա, իր ճառին մէջ ջարդերու եւ հալածանքներու դադարումը միայն կը պահանջէր (1) եւ քուէարկութեան կ'առաջարկէր հետեւեալ բանաձեւը . «Խորհրդարանը, համուրւած որ Թրանսա պարտազանց պիտի գտնուէր Հայերը նորանեալ բանաձեւը . «Խորհրդարանը, համուրւած պաշտպանութիւնը խաղաղական միջոցներով ապահովել որոշած՝ պետութիւններու հետ համաձայ- նութեամբ, կ'անցնի օրակարգին » արդ, Հայոց խնդիրը չի լուծուիր երբ ջարդերն ու հալածանքները դադրին . այդ տարրական արդիւնքին համեմուտ համար չէր որ 300000 հոգի կորսնցուցինք . եւ սա- կայն, պէտք է խոստովանիլ, հակառակ այնքան ճիգերու, զեռ եւրոպացի հայասերներէն շատերը չեն տողորւած, իրենց բոլոր աղնիւ տրամադրութիւններովը հանդերձ, այս պարզ ու տրամաբանա- կան դադարով . այդ տեսակէտով, շատ աղէկ բան մը ըրած էր Հնչակեան կուսակցութիւնը ֆրան- սական բոլոր երեսփոխաններուն զրկելով կող մը, որուն «Բըթիթ ռէբըւլիթըն» ու «Պլոք»ը շատ համակրական յօդուածներ նուիրած էին, եւ որուն մէջ կը յայտարարէր թէ ջարդերուն դադարումը հայկական ի նպրոյն լուծուին ըսել չէ եւ թէ պէտք է որ Եւրոպա գործադրէ վերջապէս 1895ի մեծու- թեան արիւնտա խորհուրդներուն» եւ «իւր ոգեւարին գերագոյն ցնցումովը Տաճկաստանի վերջնական փլուզումը յառաջ բերէ » :

Փրանքօ-թուրք վէճը եւ Քոմբիէնի ֆրանքօ-ուս տեսակցութիւնը, եթէ իրականացումը չբե- րին այն բոլոր յոյսերուն զոր առաջուց ներշնչեցին, ապադիմել չեղան սակայն . հանրային կարծիքը Փրանսայի մէջ ի նպաստ Հայոց երբեք այնքան չէր բորբոքած, եւ այնքան ինքնաբեր ու կորովի կերպով, որքան այդ միջոցին, ու ես միշտ հաշուի կը դնեմ հանրային կարծիքին ուժը, որ ոչ կամ կանուխ իր արդիւնքը կ'ունենայ . ֆրանսական ամենէն կարեւոր թերթերը, — «Թան», «Մաթէն», «Բըթիթ ռէբըւլիթը», եւն, զրահաւոր՝ երուն մեկնելէն յետոյ, բացարձակ յայտարարեցին որ այդ արարքը Հայերը փրկելու համար պէտք էր որ կատարուած ըլլար . նոյ. Կի օրը, երբ պ. Տելքասէ սկսաւ երկայն բարակ Թուպինիի եւ Լորանտոյի խնդիրները բացատրել, «Հայաստանէն ի՞նչ լուր» ազաղակեցին բոլոր երեսփոխանները, յայտնելով թէ երկու ֆրանսահպատակ անձերու շահերուն պաշտպանութենէն շատ աւելի շահեկան կը գտնէին Հայոց խնդիրը : Ատի պէտք չէ մոռնանք . հայա- սիրական շարժման այդ բոլորքումը որ ի յայտ եկաւ այդ օրերուն, չէ դադրած ֆրանքօ-թուրք վէճին փակումէն յետոյ : Լրագրութեան մէկ մասը կը շարունակէ յայտարարել թէ ֆրանքօ-թուրք վէճը կրնայ աւարտած համարուիլ, բայց թէ առով ամէն գործ կարգադրուած չի կրնար սեպուիլ Սուլթա- նին հետ, քանի որ հայկական խնդիրը կը մնայ իր քառասային վիճակին մէջ . ֆրանքօ-թուրք յարա- բերութեանց վերսկսումէն մէկ քանի օր յետոյ, «Թան»ը կը հրատարակէր խմբագրական մը ուր, բո-

(1) Պ. Տընի Քոչէնն է որ այդ օրը ամենէն ճիշդ բանաձեւը առաջարկեց . «Խորհրդարանը կը հրաւիրէ կառավարութիւնը Դուռը ստիպելու որ յարգէ Քաբիթիլիսիոնները եւ օտար կառավա- րութեանց հետ համաձայնելու որպէս զի Սուլթանը բռնադատեն իրագործել Պերլիի դաշնագրին որոշած բարենորոգումները :

զորքելով Բ. Դրան արձակած մէկ հեռագրին դէմ որով թուրք կառավարութիւնը կը պահանջէր որ Եւրոպան չմիջամտէ որպէս զի ինքը կարենայ բարենորոգումներն իրագործել, կ'եզրակացնէր. «Գաւ լով այն յաւակնութեան որով թուրքերն կ'ուզէ կարծեցնել թէ ինքը, ինք իրեն ձգուելով, յօմաւրակամ պիտի կատարէր ինչ որ կը մ'ըփէ Եւրոպայի հրամաններէն իսկ յետոյ, կը բաւէ յիշել այն արիւնի եւ մահուան գործը որ Հայաստանի մէջ կը կատարուի քաղաքակիրթ աշխարհին աչքէն հեռու եւ ուշադրութենէն անդին, որպէս զի այդ սոփեստութիւնը ջրուի: Պէտք է յուսալ որ պետութիւնները պիտի զգուհնեն ի Պոլիս թէ նուազ քան երբեք արամադիր են անաւոր պատասխանատուութիւններ սաանձնել՝ թեւերնին ծալլելով եւ ձեռնպահ մնալով:»

Պ. Ռուանէ, որ որոշած էր, ինչպէս ծանուցած էինք, հարցապնդում մը ուղղել նոյեմբեր 4ի օրը, յայտարարեց թէ, հակառակ պ. Տելքասէի տուած բացատրութեանց, ինքը մտադիր էր ուրիշ օր մը իր հարցապնդումն ընել դարձեալ, որոշ պատասխան մը առնելու համար նախարարէն. Պ. Պ. Տընի Գոչէն, Մարսէլ Սանյա եւ Գ'էսթութեւնէլ տը Գոնսթան գացին պ. Տելքասէին յայտնել թէ ուրոշած են խորհրդարանին մէջ հարցում մը ուղղել իրեն «այն միջոցներուն վրայ զոր Փրանսական կառավարութիւնը ձեռք առած է կամ մտադիր է ձեռք առնել գործադրել տալու համար Պերլինի դաշնագրին յօդուածները Հայաստանի եւ Մակեդոնիոյ մէջ»: Այդ հարցապնդումները յայտնեցան, բայց բարձի թողի չեն եղած. պիտի տեղի ունենան՝ ծնունդի արձակուրդէն յետոյ, երբ արտաքին գործոց նախարարութեան պիւտճէին վիճարանութիւնն սկսի: Այդ օրը պ. Տելքասէ պիտի պարզէր հայկական քաղաքականութիւնը աւելի որոշ կերպով. կը մաղթէի որ եթէ վճռական որոշողութեան մը բերկրաօրթ ծանուցումն ալ չընէ, — ինչ որ յուսալու դրական պատճառ մը չունինք ստայժմ, — դոնէ դարմանէր իր նոյ. 4ի ճառին սէկ քանի ցաւալի Փրանսիայը:

Պատճառ չունինք, ըսի, պ. Տելքասէի այդ մտակայճառէն վճռական որոշման մը ծանուցումն սպասելու, բայց իրաւունք ալ չունինք ենթադրել փութալու թէ Փրանսո-թուրք վէճին փակումէն ի վեր, Փրանսական կառավարութիւնը, ինչպէս Եւրոպայի միւս կառավարութիւնները, բոլորովին ծալլած մէկդի դրած են արեւելեան խնդիրը (1): Փրանսո-թուրք վէճին փակումէն քիչ յետոյ, լրտադիրները հրատարակեցին անգլիական հեռագիր մը որ կ'ըսէր թէ հիմա որ պ. Գոնսթան Պոլսիս կը դառնայ, պիտի վերսկսին Պոլսոյ զեպպաններուն միջեւ բանակցութիւնները Հայաստանի եւ Մակեդոնիոյ հարցերուն լուծում մը տալու մասին, որոնք սկսած էին արդէն անցեալ ամառ եւ Փրանսո-թուրք վէճին պատճառով ընդհատեցան: Թէ այս հեռագիրը որքան կը համապատասխանէ իրականութեան, չեմ գիտեր. կը կարծեմ սակայն թէ պէտք է զայն արձանագրել իբրև հեռագիր մը որ նըշանակութենէ զուրկ չէ՝ Փրանսո-թուրք վէճէն յետոյ գալով: Գալով Ս. Բեթերսպուրկէն «Քէօլնիչէ Չայթուկ»ին զրկուած այն հեռագրին որ կը ծանուցանէր թէ յառաջիկայ դարնան Յրանսի եւ Ռուսիոյ նախաձեռնութեամբ զեպպանաժողով մը պիտի գումարուի Պերլինի դաշնագրին յօդուածները գործադրելու միջոցներուն խորհելու համար, այդ լուրը չհաստատուեցաւ, եւ նոյն իսկ հերքուեցաւ: Ամէն պարագայի մէջ, ստոյգ է որ Փրանսական կառավարութիւնը այդպիսի զեպպանաժողով մը գումարելու համար դեռ ո եւ է հրաւէր չէ ուղղած պետութեանց. պ. Տելքասէ վերջերս յայտարարած է հայասէր երեսփոխանի մը թէ այդ հրաւէրը չէ ուղղած, վստահ չըլլալով որ հաստատական պատասխան պիտի ընդունի, եւ չէ ուղղած որ այդպիսի առաջարկի մը մերժումը Սուլթանը խրախուսէ եւ սրտապնդէ Հայոց դէմ հալածանքը նորէն սասակացնելու: Բայց ինչ որ նոյնքան ըստոյգ է, սա է որ պ. Տելքասէ չէ դադարած զբաղել հայկական խնդրով. վինքը մօտէն ճանչցող երեսփոխան մը վերջին անգամ զինքը տեսնելուն անոր սեղանին վրայ նշմարած է Ծժի մեմորանտումը պարունակող «Դեղին գիրք»ը: Պէտք է սպասենք զէպքերուն, առանց օգային երազներ օրօրելու, բայց եւ առանց վնասաբեր եւ թեթեւ վհատութեանց մէջ գլորելու:

Սա կրնանք հաստատել այժմէն — եւ ատոր համար է որ կը մտածեմ թէ ապարդիւն չեղան մեզի համար այս վերջին զէպքերը. — թէ Փրանսո-թուրք վէճէն ի վեր փոփոխութիւն մը ունեցած է թուրքիոյ Հայոց վիճակին մէջ, փոփոխութիւն մը որ շատ յարաբերական նշանակութիւն մը ունի անշուշտ, բայց զոր պէտք չէ անասենք: Փրանսո-թուրք վէճէն առաջ, անհելի էր կացութիւնը Սասունը պաշարուած էր եւ կոտորածը վերահաս, Մուշի մէջ ջարդ տեղի ունեցած էր, Թամզարայի

(1) Ընդհակադակն նորագոյն լուրերը մտածել կու տան թէ շատ աւելի ընդարձակ եւ լուրջ կերպով արեւելեան խնդիրը պիտի վերստին բացուի ընդհուպ, կա՛մ Մակեդոնիոյ, կամ Ալպանիոյ, կամ Թրիբոլի, կամ Հայաստանի, կամ Գովիէթի խնդրոյն պատճառով: Փրանսա հաւանք է որ Իտալիա Թրիբոլին դրաւէ, եւ ինքն ալ Մաքսը իւրացնէ: («Թան»ի դեկտ. 16ի թիւին կիսապաշտօնական մէկ յօդուածը կ'ըսէ՝ «Մեր Փրանսացուցող գործը չէ ջանադիր ըլլալ Տաճկաստանի ամբողջութիւնը պաշտպանելու համար, ատի Գերմանիոյ գործն է» մինչդեռ մինչեւ ցարդ Փրանսա սաստիկ նախաձեռնութիւն կ'երեւնար Տաճկաստանի ամբողջութեան պահպանման») Ռուսիա համախոս է եւ աջակից իտալո-ֆրանսական այս համաձայնութեան, եւ անշուշտ ինքն ալ մութին մէջ իր պատասխանը պատրաստէ. Սնդիա Գովիէթը իւրացնելու հետամուտ է. եւ Աւստրիա մտադիր կը թուի Պոնտա-Հերսէզէն անդին տարածել իր տիրապետութիւնը թուրք հողի վրայ: Արեւելեան խնդիրը հեռու է ուրեմն փակուած ըլլալէ այս վայրկեանիս:

մէջ տասերկու գիւղ մէկմանց բնաջինջ էին եղած, եւ բոլոր նշանները ցոյց կուտային թէ ընդհա-
 նուր կոտորածի երկրորդ շրջան մը քաջուած էր. ֆրանքո-թուրք վէճէն ի վեր, այդ վտանգը չէզո-
 քացած կը թուի: Սասունը միշտ պաշարուած կը մնայ, բայց կոտորած տեղի չունեցաւ: Մուշի
 ջարդը դադրած է: Նոյն իսկ սա տարօրինակ երեւոյթին հանդիսատես կ'ըլլանք. քաջ Մշեցի մը,
 Անդրանիկ, խուճաք մը կոտորուեցաւ հետ, Առաքելոց վանքը կ'ամրանայ, ձեռքը չի յնալու համար կա-
 ոււարու թեան որ զինքը կ'ուզէր ձերբակալել, կը սպաննէ բազմաթիւ տաճիկ զինուորներ, ու յան-
 կարծ զօրքերու շղթան ձեղքելով լուսները կ'ապաստանի. ուրիշ ուե է ատեն, թուրքերը իրենց
 կատաղութիւնը պիտի յապեցնէին՝ անզէն ժողովուրդին վրայ թափուելով ու կիներն ու ծերունիները
 ջարդելով. այժմ այդպիսի խժոճութիւններէ զգուշանալու ձեւ ունի թուրքը. կը դրաղի միայն յե-
 դափոխականները զսպելու գործով: Եւ ուրիշ ուե է տեղէ ջարդի լուր առած չունինք: Ատի ար-
 դիւնքն է զայրոյթի ազաղակին զոր հանրային կարծիքը միաձայն արձակեց Սասունի Մուշի եւ
 թամզարայի ոճիրներուն ի լուր, եւ այն ճնշումին զոր ֆրանսական եւ ռուսական կառավարու-
 թիւններն, ինչպէս եւ անգլիականն ու նոյն իսկ գերմանականը, բանեցուցին Իրան վրայ, ֆրանքո-
 թուրք վէճի միջոցին, հասկցնելով Սուլթանին որ չպիտի հանդուրժէին որ ջարդերը չարունակու-
 էին կարելի է մտածել թէ Սաիտ փաշայի եպարքոսութեան կոչուելն ալ անմաս չըլլայ այս փո-
 փոխութեան մէջ. Սաիտ փաշայի անցեալը ոչինչ չունի մեզի վտանգութիւն ներշնչող, ընդհակա-
 ոակին. բայց ապուշ մը չէ այդ թուրքը, եւ հերիք է որ թուրք մը ապուշ չըլլայ՝ որպէս զի ըմ-
 բռնէ թէ մաճկաստանին ամէնէն էական շահերը կը պահանջեն ջարդերուն զաղարուժը. վերջին
 հեռագիր մը կը ծանուցանէր թէ Սաիտ փաշա յայտարարած է Սուլթանին թէ պիտի հրաժարի պաշ-
 տօնէն եթէ չընդունուին իր մէկ քանի պայմանները, որոնց գլխաւորներէն մէկն է Հայոց գոհա-
 ցում տալ:

Այս բոլորը կրնան մասնակի գոհունակութիւն մը պատճառել մեզի, բայց բնաւ երբեք մեզ
 չեն կրնար մղել մեր իտէալին ոչ թէ հասած, այլ նոյն իսկ մօտեցած համարելու: Մեր իտէալին չենք
 կրնար հասնիլ՝ ուրիշին ձեռքով: Անոր պիտի հասնինք եթէ մենք մեր ուժովը հիմը դնենք մեր Շէնքին:

Այդ ուժը չի պակսիր մեզի, բարոյական ուժ է, ինչպէս եւ նիւթական: Բայց ցրուած է ան, պա-
 ոակտուած, շատ տեղ ալ թաքուն, ինքիքին անգիտակից: Բարոյական ուժ ունենալուս մեծագոյն
 ապացոյցը այս վերջին դէպքերուն առթիւ եւրոպական հանրային կարծիքին մեծազոյր բռնկումին
 մէջ կրնանք տեսնել. հինգ տարի առաջ, երբ արեւն ու կրակը Հայաստանը կ'աւերչակէին մէկ ծայ-
 րէն միւսը, եւրոպական մամուլին մեծագոյն մասը մեզ կը նախատէր, մեզի դէմ կը դաւէր, թուր-
 քը կը պաշտպանէր, եւ ազնիւ ու անկաս յոտածողներու փոքր շրկատ մըն էր միայն որ մեզ կը
 պաշտպանէր: Այս անգամ ջարդի մը սկզբնաւորութեան լուրը բաւեց, ֆրանքո-թուրք միջադէպին
 հետ զուգարկեցելով, որպէսզի եւրոպական լրագիրները գրեթէ միաձայն բողոքի ձայն մը բարձրացը-
 նէին, ու գրեթէ ոչ մէկ թերթ չհամարձակեցաւ թրքամու կամ հակահայ յօդուածներ հրատարակել:
 Այս արդիւնքը ինքնին չէր կրնար շոյանալ, անի հետեւանքն է այն կուռ հաստատամտութեան ու-
 թով հայ ժողովուրդը հակառակ ամենէն ծանր ազէտքներուն փարած մնաց իր դատին, ու թուրք
 բեժիմին դէմ ամէն ձեւով կոիւր անվկանդ շարունակեց, այն անդադրում յամառ գործունէու-
 թեան որով եւրոպայի բոլոր թերթերուն, համաժողովներուն, խորհրդարաններուն մէջ իր մշտա-
 գոտ պահանջքը ազաղակեց ուղղակի իր ձայնովը եւ կամ եւրոպացի հայասէրներու բերնովը՝ ու-
 թոնց թիւն իր շարունակական ճիգովը բազմապատկեց: Նոյ 4ի օրը, «Հայաստան» պոռաց ֆրան-
 սական Խորհրդարանը՝ առանց կուսակցութեան խտրութեան՝ Թուպինիի խօսքն ընող նախարարին
 երեսն ի վեր. այդ ճիշը, որ պատմական պիտի մնայ, Հայուն բարոյական կորովին արդիւնքն էր:

Նիւթական ուժ ալ ունի Հայը, բայց ան կը մնայ տարտղնած կամ ինք իրեն անգիտակից՝
 ինչպէս կ'ըսէի վերեւ: Գաղափարի մը համար զիրենք զոհող Հայեր չեն պակսիր. Անդրանիկներն ու
 Սերնաձեւանները ատոր ապացոյցն են. եւ ատոնց պէս հարիւրներ յառնէին պիտի անշուշտ եթէ յեղա-
 փոխական հզօր կազմակերպութիւն մը ունենայինք. սխալ է ըսել թէ Հայը վատասիրտ է ի բնէ.
 Հայը ինք իր վրայ վստահութիւնը կորսնցուցած է դարաւոր գերութեան մը մէջ. բայց առաձգական
 բնութիւն մը ունի ան. ամէն անգամ որ դիմադրելու միջոցներն ունեցած է, այդ «ոչխար»ը առիւծ
 է դարձած. պէտք է որ մտածենք այդ միջոցները գտնելու, բազմապատկելու, կազմակերպելու: Ա-
 ուակել քան երբեք ատենն է — պիտի չդադրիմ կրկնել, — որ մեր գործօն մարմինները ամէն կու-
 սակցական, անճնական վէճեր ոտնակոխ ընեն ու փութան անվերապահօրէն ու անկեղծօրէն լծուիլ
 Միութեան գործին, որպէս զի միացա՞ մարմինը ըլլայ այն ուժեղ ու միակ լծակը որուն պէտք ու-
 նի Հայութիւնը՝ որպէս զի վեր վերցնէ իր ծանր ու անհրաժեշտ բեռը:

Երբեք համակարծիք չեմ որ այժմ անմիջապէս յարձակողական գործունէութիւն մը սկսին հայ
 յեղափոխական մարմինները. վնասակար կը նկատեմ ո եւ է ցոյց կամ արշաւանք. ուժի այդպիսի
 կարճատեւ վատնումները միայն ազէտքներ կրնան յառաջ բերել, եւ չեն կրնար մեզի տալ վճռական

արդիւնքը զոր կը բազմանք ձեռք ձգել, որովհետեւ անոր պիտի հասնինք երբ փորձենք տեւական ու լուրջ ծիրք որ անհրաժեշտ է: Այդ ճիգը այն ատեն պէտք է փորձենք երբ առաջուց վստահ ըլլանք թէ զայն պիտի կարենանք շարունակել այնքան ատեն որքան հարկաւ որ է ստիպելու համար Եւրոպան միջամտելու. ատոր համար անհրաժեշտ է որ հայ ժողովուրդն ունենայ միակ գործօն մարմին մը, որուն շուրջ իտանայ իր ամբողջ կորովը, եւ որ լուրջ նախապատրաստութիւնով մը ամբարէ նիւթական բոլոր միջոցները որ անհրաժեշտ են գործին համար, վերջապէս զձէ ծրագրերը, որոշ, կտրուկ, սահմանափակ, գործնական ծրագրեր որուն մէջ պէտք է վերջապէս կեդրոնանայ, եւ գործի սկսի երբ իրեն պէտք եղած բոլոր ուժերուն տէր զգայ ինքզինքը:

Կայ գործ մը զոր ամէն վայրկեան պէտք է շարունակել, որուն համար ամէն ուժ բաւական է, որուն համար ամէն բոլոր պատեհ է, — այն է յառաջ տանիլ Եւրոպայի կարծիքը մեր դատին ի նպաստ միշտ վառ պահելու ջանքը, եւ միանգամայն մեր հայրենիքի եղբայրներուն անհատական ինքնապաշտպանութեանը նիւթապէս եւ բարոյապէս օգնել: Այս երկրորդ եւ կարեւորագոյն գործին մէջ գտնուեցաւ Հայ մը որ ամենէն հոյակապ օրինակը տուաւ: Մշեցի սքանչելի աղջիկը, Շողակաթն էր ան, որ նոր Յուզիթ, գնաց ձեռքով սպաննեց զինքը եւ իրեն պէս շատ կոյսեր պղծող Շէրիֆ քիւրտ պէկը: Ամէն Հայ որ յարձակում կը կրէ Տաճիկէ մը կամ Քիւրտէ մը, պէտք է որ սուղ ծախէ իր կեանքը. ամէն Հայ որ իր սիրելի կորսնցուցած է Թուրքին դանակին տակ, պէտք է անոր վրէժը լուծէ. եւ ամէն հայ թերթ, պաշտօնապէս յեղափոխական ըլլայ կամ ոչ, այդ գաղափարը իր ամէն թիւին ճակատը դնելու է. այդ պորը յեղափոխական փրփականտի գործ իսկ չէ. աւելի տարրական պաշտօն մըն է, զոր ո եւ է հայ տէրտէր կամ վարժապետ պէտք է ամէն օր սորվեցնէ իր շուրջի մարդոց. անասուններն իսկ իրենք ակոսան կամ մագիլը կը գործածեն, երբ իրենց վրայ յարձակին. եւ եթէ Շողակաթնը բազմապատկուին, Շէրիֆները կը նուազին ինքնին այդ զազանները հետու են հերոսներ ըլլալէ. անոնք կը սիրեն սպաննել բայց ոչ սպաննուիլ:

«Ժող. համ.»-ը վերջերս, խմբագրականի մը մէջ օրինակ կը բերէր Բոլոնիացիները որոնք որպէս թէ միայն իրենց նիւթական ու մտաւորական դարդացմամբն զբաղած ըլլալուն համար, ուժ մը գոյացուցեր են եւ այդ պատճառով Չարը հրաւիրեր է անոնց անուականներէն երեսուն հոգի Սքալա Ռուսիոյ հետ կապելու համար լեհ տարրը: Ասի բացարձակապէս սխալ էր. Լեհերը իրենց անկախութիւնը կորսնցնելէ ի վեր, միայն իրենց մտաւորական ու նիւթական վաղացումը չէ որ իրենց գործունէութեան նպատակակէտ ընտրած են. անոր հետ միշտ վառ պահած են յեղափոխական կրթական ալ իրենց մէջ: Որովհետեւ շատ սխալ է կարծել թէ մին միւրը կ'արդիւնէ: Ո՞վ պիտի համարձակի ըսել թէ Չարդերէն ի վեր հայ միտքը կասած է եւ Հայոց առեւտրական գործունէութիւնը բոլորովին դադարած. անշուշտ Տաճկաստանի մէջ Հայոց մտաւորական ու առեւտրական շարժումը մեծ վնաս կրեց՝ առժամապէս. բայց տրտասահմանի մէջ հայ միտքը մէկ քանի այնպիսի շողիւններ արձակեց ինչպէս Չարդերէն առաջ շատ քիչ արձակած էր, եւ կապրիէլ Մուրէ իրաւունք ունի, անոնցմէ մէկուն վրայ խոսած ատեն, Չարդերուն բերած ցնցումին արդիւնքն անոր մէջ տեսնելու. երկրէն դուրս տարտղնած Հայերուն մէջ կան շատ ուրիշներ ալ որ համալսարաններու մէջ պատրաստուելու վրայ են, եւ կրկնապէս հայ ու ներուժօրէն գիտակից գործիչներ պիտի ըլլան վաղը. կան ալ Չարդերէն ի վեր արտասահմանի մէջ առեւտրական ձեռնարկներու նուիրուած Հայեր որոնք թերեւս նուազ անտարբեր պիտի ըլլան Գործին քան նախորդ շրջանի առեւտրականները, ինչպէս որ Յունաստանի առաջին Չարդերէն փախած Եւրոպայի այլ եւ այլ կողմերը հաստատուած Յոյներէն շատերը, հարստացած, նիւթական միջագոյն աջակցութիւնը հասուցին յետոյ հայրենիքին վերանորոգման գործին: Բոլոնիացիները զուգահեռաբար շարունակեցին իրենց բարոյական ու նիւթական զարգացման աշխատիլ ու իրենց հայրենասիրական գործը մոխրի տակ վառ պահելու ջանադիր ըլլալ: Ու «Ժող. համ.»-ին անիմաստ դատողութեան ամենէն ջախջախիչ հերքումը իրենք իսկ Բոլոնիացիները տուին. Վրէչէնի գերմանական վարչապետութեանց առթիւ ամէնը մէկէն մէկ մարդու պէս, աւստրիական, ռուսական, գերմանական Բոլոնիային մէջ ոտքի ելլելով՝ բողոքելու եւ իրենց ազգային իրաւունքները պաշտպանելու համար: Եւ ճիշդ այդ կրկին ուժն ունենալուն համար է որ Չարը երեսուն լեհ անուականները կը կանչէ Սքալա:

Եւ «Ժող. համ.»-ը որ Լեհերը օրինակ կուտայ որպէս զի մենք ալ անոնց պէս ուժ մը նկատուինք եւ Արևելքի տիրապետութիւնը իրարու ձեռքէ քաշող պետութիւնները մեզի հաշուի դրնեն, պէտք է նկատէ որ մենք Հայերս արդէն կը կազմենք տարր մը որ հաշուի կը դրուի. Ռուսաստան կ'ուզէ որ Հայերը իրմէ միայն յուսան փրկութիւնը. Սախտ փաշա որ նախկին հայատեաց մը եղած է, Հայոց գոհացումներ տրուելը իր ծրագրին գլխաւոր պայմաններուն կարգը կը գնէ. ու երկտասարդ-թուրքերը վայոց աջակցութեանը կը դիմեն, եւ իրենց ծրագրին մէջ վերջապէս կը մտցունեն ՅԱրդ յողուածին գործադրութիւնը. Գրանսայի ամենէն կարեւոր երեսփոխանները Հայոց դատին պաշտպան կը հանդիսանան, զգալով որ Հայը ֆրանսական ազդեցութեան հզօրագոյն տարածիչներն

մէկն է Արեւելքի մէջ : Եւ ասի՝ անոր համար որ Հայր , ինչպէս Լեւր , թէպէտ անշուշտ անկից չատ
նուազ ընդարձակ ու զօրեղ աստիճանի մը մէջ , ցոյց տուած է մտաւորական ու նիւթական ուժի հետ ,
յիզափոխական ուժ :

Կայ կէտ մը Լեւերուն այս վերջին ընթացքին մէջ , որուն ես իսկ կը հրաւիրեմ ազգակիցներս
հետեւիլ . ատի այն խոհեմութիւնն է զորանոնք ցոյց տուին իրենց արիւթեանը մէջ . իրենց կորովը ,
միութիւնը , զիմագրելու կարողութիւնը ապացուցին , բայց ոչինչ ըրին յախուռն , աղեաւորաբար
յանգուգն : Կնճօտ ու փափուկ կացութեան մը մէջ ենք , ուր յոյսն նշոյլներ չեն պակսիր . բայց ուր
վասնիները — որ մեծ են — չեն անհետացած : Սխալ քայլ մը , նոյն իսկ ամենէն ազնիւ խանդավա
ռութենէն ներշնչուած , կրնայ կորսնցնել տալ մեզի այն քիչ մը բանը զոր ձեռք ձգած ենք : Յառաջ
քալինք բացուած ճամբուն մէջէն , առանց վայրկեան մը ընկրկելու . բայց ամէն կոխած սեղերնիս
զլուշութեամբ քննելով :

Բարից. 27 դեկտ. 1901

Ս.ՐՇՍ.Կ ՉՕՊԱՆԵՍՆ

Յ. Գ. — Յունուար 20ի օրը . պ. Ռուանէ իր հարցապնդումը կատարեց , եւ պ. Տելքասէ պատաս
խանեց անոր : Այստեղ կ'աւելցնեմ այն մէկ քանի խորհրդածութիւնները զոր այդ գէպը կը ներ
չընչէ եւ որոնք բնութիւն չունին յօղուածիս պարունակած դատումներուն մէջ հիմնական փոփո
խութիւն մը յառաջ բերելու : Շատ զեղեցիկ ճառով մը պ. Ռուանէ հերքեց պ. Տելքասէի այն կար
ծիքը թէ Մուշի մէջ ջարդ տեղի ունեցած չէր , Հայաստանի մէկ քանի մասերուն մէջ հայ տարրին
մեծամասնութիւն կազմելն ապացուցուց՝ յիշելով ուսուցիչութեան պատերազմէն յետոյ թուրք կա
ռավարութեան հայաբնակ գաւառներուն սահմանադրումին մէջ մտցուցած արտեստական փոփո
խութիւնները , մէջ բերաւ ուրիշ շատ մը իրողութիւններ ցոյց տալու համար թէ այն պահուն ուր
Ֆրանքո-թուրք վէճը պայթնցաւ , Հայաստանի մէջ հալածանքը մեծ սասակութեան մը հասած էր ու
մէն կողմ , ու յայտարարելէ յետոյ թէ ինքը խորհած էր որ Ֆրանսական կառավարութիւնը իր յա
րարութիւնները խզելու եւ մանաւանդ նաւաստրմ մը զրկելու որոշումին առաջնորդող գլխաւոր
չարժաւորներէն մին Հայոց կացութեան բարւոքումը Սուլթանէն պահանջելու կամքն եղած ըլլա
լու էր , պ. Ռուանէ ըսաւ թէ նոյն իսկ պ. Տելքասէի նոյ , 4ի ճառէն յետոյ իր հաւատքը պահած էր ,
հիմնուելով պ. Վալտեր-Ռուսոյի այդ օրն ըրած յայտարարութեան վրայ թէ «Ֆրանսական արգի զան
լիճը Ֆրանսացիներու նիւթական շահերու պաշտպանումին հետ իր մտահոգութեանց առաջին կար
գը կը դասէ բարոյական շահերուն ժառանգութեան պահպանումը» , եւ աւելցուց թէ թողուլը որ
Սուլթանը Հայերուն ջնջումը աւարտէ՝ «Ֆրանսայի այդ բարոյական շահերուն ժառանգութեան
պահպանումին դէմ» մեղանշում մըն էր . ու պ. Ռուանէ կ'զրակացուց՝

«Անվիճելի է որ Մուշի սարահարթին , Պատուի հովիտներուն , Զէյթունի կիճերուն մէջ ժողովուրդ մը կոյ սը իր
գոյութեանը գիտակցութիւնն ունի , ժողովուրդ մը որ հոգեվարք է , որ կը մեռնի , եւ որ Եւրոպան օգնութեան կը կանչէ :
... Ֆրանսայի անունը մինչեւ հոն գացած է իր օգտակար , իրաւունքի պաշտպան ազգի նշանակութիւնովը : Կը խնդրեմ
արտաքին գործոց պ. նախարարն որ մեզի բո՛ւ թէ ի՞նչ ըրաւ այս պարագային մէջ Հայոց համար , արդարութեան , քա
ղաքակրթութեան , մարդկութեան , այսինքն Ֆրանսայի համար :»

Պ. Տելքասէ յատկօրէն յայտարարեց իր պատասխանին մէջ թէ Ֆրանսական կառավարու
թիւնը հայկազան խնդիրը Ֆրանքո-թուրք վէճին չէ կցած , որովհետեւ «հայկական խնդիրը միջ
ազգային խնդիր մըն է , որու հանդէպ Ֆրանսան հեռու է անտարբեր մնալէ , որուն վրայ կը հրա
ւիրէ պետութեանց ուշադրութիւնը , բայց զոր իրաւունք չունէր եւ պարտականութիւն ալ չունէր
միայնակ յարուցանելու» , եւ որովհետեւ «հայկական խնդիրը Ֆրանքո-թուրք վէճին խառնելը Եւրո
պային իրաւունք եւ առիթ տալ էր Ֆրանքո-թուրք վէճին մէջ միջամտել , բան մը որմէ ամենէն
աւելի կարեւոր էր խուսափիլ :» Պ. Տելքասէ ընդունեցաւ որ Պերլինի զաշնագրին պայմանադրած
բարեկարգութիւնները չէին գործադրուած , բայց ջանաց պետութիւններուն 94ի , 95ի եւ 96ի ջարդե
րուն միջոցին միջամտած չըլլալը եթէ ոչ արդարացիի , գոնէ բացատրել , պարզելով թէ ի՛նչպէս
նոյն իսկ Պերլինի վեհաժողովին մէջ պետութիւնները ետ կիցած էին անջատապէս կամ հաւաքաբար
բռնի ուժ գործածելով բարենորոգումները գործադրելու պայման մը դնելէ , որովհետեւ վախցած
էին որ ասի եւրոպական պետութեանց միջեւ աղետաբեր բաղխում մը կրնար յառաջ բերել : Սա
կայն պ. Տելքասէ աւելցուց հետեւեալը , — եւ իր այս ճառին ամենէն կարեւոր մասն է այդ :

«Բայց այդ գէպերը նոր կացութիւն մը ստեղծեցին , եւ կարելի է ինքնին հարցնել թէ անոնց վերադարձը իրենց
ամբողջ արւթեան մէջ պիտի չյարուցանէ՞ր այն անզոյ խնդիրները զորոնք իմաստնօրէն կ'ուզեն մէկ կողմ դնել : Անոնց
վերադարձին սպասուելիքն իսկ զանոնք մէջտեղ հանելու բնութիւնն ունի : Անխուսափելի կը թուի որ ազգաբնակչութիւն
ներորոնց ինչքերուն անպատիժ կերպով կողոպտուելը պիտի շարունակէին թող տալ , կամ որոնք գիտենք պիտի միշտ
ենթարկուած տեսնէին շատ յաճախ անպատու հաս թեցած սճիւրներու , սպանութիւններու , վերջի վերջոյ մտածեն թէ ամէն
բան նախամեծար է քան կրտորածի մը մղձաւանջին ներքեւ այդ կեանքը : Ֆրանսական կառավարութիւնը իր բոլոր կրցածն
ըրած է Հայոց վիճակին դառնութիւնը մեղմացնելու , պատրաստուելու վրայ եղող ջարդեր արգելելու համար , (պ. Տելքասէ

կարգաց Հայաստան գտնուող կարեւոր Հայու մը մէկ նամակը , որուն անունը չտղեց յայտնել , եւ սթիկ'ըսէ : « Չարդե-
րուն առաջքն առնուեցաւ շնորհիւ դեպքաններուն յանդիմանութեանց եւ դիւանագիտական յարաբերութեանց եղմանը
Ֆրանսական կառավարութեան , որուն կորովի ընթացքը ամենամեծ ազդեցութիւնը գործեց »)

« Վտանգը վերջնապէս բառնալու համար , — եղբակցուց պ. Տելքասէ , — Հայերը եւ անոնց հետ իրենց պէս ուրիշ կե-
ղեքուածներ ալ՝ կայսրութեան ուրիշ մասերուն մէջ պետութեանց միջամտութիւնը կը պահանջեն : Անոնք որ հակամէտ են
կարծելու թէ ոչինչ աւելի դիւրին է քան այդ միջամտութիւնը , թող համին յիշել Պերլինի վեհաժողովին պատմութիւնը ,
թող իորհին դարձեալ այն բազմագիծի , փոփոկի , ծանրակշիռ խնդիրներուն զոր կարող է ան արժանցնել , եւ սակայն իրենց
գործակցութեան օրինակը Չինաստանի մէջ , ուր , հակառակ ա՛յնքան թիւրիմացութեանց եւ դժտութեանց պատճառներ-
ու եւ պատրուակներու , պետութիւններն իրենց միութիւնը պահպանեցին , թոյլ կուտայ մտածել թէ այդպիսի ճիգ մը
իրենց բարի կամեցողութենէն վեր չէ :

« Արդէն խնդիրը Սուլթանէն իրեն հպատակ եղող այս կամ այն ցեղին համար առանձնաշնորհութիւններ կորզելու
վրայ չէ՝ գործնք ան կարենայ գործածել գրացի ցեղերը հարստահարելու համար , խնդիրը . . . (պ. Ռուանէ կ'ընդմիջէ՝
« Ապրելու առանձնաշնորհութիւնը սալու վրայ է ») խնդիրը կայսրութեան բոլոր ժողովուրդներուն համար , առանց կրօնքի
եւ ցեղի խտրութեան , արդարադատ վարչութիւն մը եւ անկողմնակալ արդարութիւն մը ձեռք ձգելու վրայ է : խնդիրը
մանաւանդ՝ կեանքի ապահովութիւն ձեռք ձգելու վրայ է , որ այնքան հարկաւոր է թուրքիս գոյութեանը որքան Շեր-
պայի հանդարտութեանը համար : Չեմ բեր թէ կարեւորութիւն չունի այն ձեռք սրով պետութիւնները յորմար պիտի նկա-
տեն միջամտել . բայց միասին դիմեն Սուլթանին եւ կամ նախընտրեն անջատօրէն խօսիլ անոր հետ , իրենց խօսքը ան-
շուշտ լսելի պիտի ըլլար եթէ ամենքն ալ ցոյց տային համոզում մը դիւրեք պաւակտելու համար ի գործ դրուած ամէն
չանք յուսահատեցնելու չափ ուժով : Ըստ իս՝ ատի քաղաքական բարձր նախատեսութեան գործ մը պիտի ըլլար այնքոր
որքան մարդկային համերաշխութեան : Եւ այսօր ոչ ոք կրնայ տարակուսիլ թէ Ֆրանսան , որ արդէն ըրած է այն բոլոր
գիմուսները զոր միայնակ կրնար ընել , պատրաստ է եւսանդադին գործակցելու այդ գործին , համապատասխան ըլլալով որ թուր-
քիս անկեղծ բարեկամ ցոյց տուած կ'ըլլայ ինքզինքը՝ անոր յիշեցնելով թէ կառավարութիւն մը երկայն ատեն
անպատիժ կերպով չի քանդէր կամ թույլ չի տար որ քանդեն իր գոյութեան պատճառները : »

Պ. Ռուանէ , հակիրճ պատասխանի մը մէջ , ընդունեցաւ որ Ֆրանսական կառավարութիւնը ար-
գիւնաւոր ջանքեր ըրած ըլլայ կարգ մը աղէտքներ արգիւլելու համար , եւ թէ նաւատորմին ուղար-
կը ընդհանուր ջարդերու ծրագրի մը գործադրութիւնը կասեցուցած ըլլայ , « Բայց՝ հարցուց » ո՞վ
կ'ապացուցանէ թէ յառաջիկայ գարնան ջարդերը պիտի չվերսկսին » , ցաւ յայտնեց որ Ֆրանսական
կառավարութիւնը Հայոց կացութեան տեւական բարեօրոյց մը պահանջած չըլլայ նաւատորմը զըր-
կած ատեն , եւ յայտարարեց թէ այս անգամ եթէ զարձեալ ջարդեր տեղի ունենան , Եւրոպա , որ
առաջուց ամէն բանի տեղեկացած է , աւելի ծանր պատասխանատուութիւն մը պիտի ունենայ :

Պ. Տրնի Բոչէն յայտարարեց թէ եւրոպական տակնուվրայութեան մը վտանգը այսօր գո-
յութիւն չունի՝ միջազգային արդի կացութեան բերմամբ , թէ արեւելեան խնդիրը կորսնցուցած
է այժմ այն սուր ձեւը զոր ունէր ատենով . այն խնդիրը որուն լուծումը կը պահանջուի , Պերլինի
վեհաժողովին մէջ արդէն որոշուած , լուծուած խնդիր մըն է :

Այսպէս ուրեմն , պ. Տելքասէ որոշապէս յայտնեց թէ Ֆրանսական կառավարութիւնը Ֆրանքո-
թուրք վէճին չէր կցած հայկական խնդիրը . ատի պիտէինք արդէն . բայց ատկից չենք կրնար նու-
րէն հետեւցնել թէ պ. Տելքասէ փորձած չըլլայ Բոմբէյի տեսակցութեան մէջ ռուս կառավա-
րութեան հետ համաձայնութիւն մը գոյացնել հայկական խնդրոյն լուծմանը ձեռնարկելու համար .
այդ բանը փորձած եւ չյաջողած ըլլալուն վրայ պ. Տելքասէ բնականաբար չէր կրնար բեմէն խօ-
սիլ . սա հաստատ է որ պ. Տելքասէ , եթէ հայկական խնդրոյն հիմնական լուծման նախաձեռնութիւ-
նը Ֆրանքո-թուրք վէճին չէ կրցած կցել՝ բազմագիծի պատճառներով , անտարբեր չէ մնացած սակայն
ճիշդ այդ միջոցին Հայոց դէմ սպառնացող ընդհանուր ջարդի վտանգին հանդէպ , եւ ձեռքի տակէ
աշխատած է այդ վտանգը չէզոքացնելու , եւ յաջողած ալ է , գոնէ ժամանակաւոր կերպով՝ ինչպէս պ.
Ռուանէ ալ կը խոստովանի : Հայկական խնդրոյն արմատական լուծման գալով , պ. Տելքասէ անհը-
րածեշտ կը գտնէ որ Պերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւնները ու շարքութիւն զար-
ձընեն այդ խնդրոյն եւ փութան զայն լուծել . միշտ սակայն հայկական խնդրոյն արմատական լու-
ծումը Հայոց դէմ ուղղուած սխտեմական հալածանքներու վերջնական բարեօրոյցին եւ Տաճ-
կաստանի մէջ ընդհանուր բարենորոգմանց հաստատումին մէջ միայն կը յամառի տեսնել , եւ մենք
պէտք է բողոքենք ատոր դէմ , — թէպէտ , նորէն , պ. Ռուանէն ալ ուրիշ բան չպահանջեց բայց
եթէ « հալածանքներու դադարում » : Պ. Տելքասէ շատ օգտակար յայտարարութիւն մը ըրաւ սակայն ,
ըսելով թէ , հակառակ խնդրոյն վտանգաւոր կ'ընտանութեան եւրպական պետութիւններուն բարի կա-
մեցողութենէն վեր չէր անոր լուծմանը ձեռնարկել : Եւրոպացի նախարար մը ուրեմն հաստատած
եղաւ անա , անգամ մը եւս , թէ անկարելիութիւն մը չի հայկական խնդրոյն լուծումը : Վերջապէս պ.
Տելքասէ ընդունեցաւ թէ Եւրոպայի անչարժութեան շարունակումը կրնար աւելի սաստկացնել
միջազգային տակնուվրայութեան վտանգը , եւ խոստովանեցաւ թէ Հայոց վիճակն այնքան անա-
ւոր է որ բնական է որ « կոտորածի մղձաւանջին ներքեւ ապրելէն նախամիժար համարին անէն բան :
Այդ « ամէն բան » ը շատ նշանակալից է : Ան ըսել կրնայ ուղիւ թէ բնական է որ շուտաւ Հայերը
զերենք ջնջել ուղղորդներէն իրենց վրէժը լուծելու համար մղուին դիմելու այն բոլոր միջոցներուն
զոր յուսահատութիւնը կը ներշնչէ : Նախարարի մը բերնին մէջ այդ խոստովանութիւնը հետո է
անշահեկան ըլլալէ : Եւ այդ միայն կը բաւէ որ յուսուեալ 20ի օրը կորսուած օր մը չնկատենք :

SU.ՐԱ.Զ

Պատկերազարդ շաբաթաթերթ
Բաժանորդագրինն է տարեկան՝ Ռուսիոյ համար
6 րուպլի, արտասահմանի համար 15 ֆրանք,
Հասցէն՝

Tiflis. Rédaction du journal TARAZ

ԱՐԱՐԱՏ

Պաշտօնական ամսագիր հայրապետական
աթոռոյ Ս. Էջմիածնի

Բաժանորդագրութիւնն է, տարեկան՝ Ռուսաստանի համար՝ 4 րուպլի, արտասահմանի համար՝ 13 ֆրանք:

Կը խնդրուի բաժանորդներէն որ իրենց հասցէները մաքուր եւ անսխալ գրեն:

ԴԻՄԵՆ՝ Rédaction de la Revue «Ararat»
ETCHMIADZIN (Caucase)

ԼՈՒՄԱՅ

Դրական հանդէս

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք:

Բաժանորդագրինն է, երկու գրքի համար
3 րուպլի, իւրաքանչիւր գրքին առանձին՝
2 րուպլի:

Դիմել՝ Թիֆլիս, խմբագրութիւն «Լուսայ»ի:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊՍՏԿԵՐԱԶՍՐԴ

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք:

Երկու գրքի տարեկան բաժանորդագրինն է
3 րուպլի կամ 10 ֆրանք:

ԴԻՄԵՆ՝

Ervand Lalayantz, Séminaire Nersissian
Tiflis, Caucase.

ԱԶԲԻԻՐ

Պատկերազարդ ամսաթաթերթ

Բաժանորդագրինն է՝ տարեկան, Ռուսիոյ համար
3 րուպլի, արտասահմանի համար 8 ֆրանք:

Հասցէն՝

Tiflis. Rédaction de la revue AGBUR

ՀԱՆԴԵՍ

ԱՄՍՈՐԵԱՅ

ՌԻՍՈՒՄՆԱԹԵԹ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:

Հայ-Պրական յօդուածներէն զատ՝ ճշգիւ տեղեկութիւն կը տրուի հայ-պրականութեան, պատմութեան, եւայլն նկատմամբ ամէն ամիս երեւցած նոր հրատարակութեանց վրայ, նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրոց մէջ ապուած կարեւոր լուրերու վրայ:

«Աղբային լրագրաց բովանդակութիւն», թղթակցութիւն, ծանուցում, եւայլն:

Խմբագրութեան ղրկուած ամէն գրքերու վրայ՝ քննադատական համառօտ տեղեկութիւն սալը պիտի շարունակուի:

Մեր հեղինակ Ընթերցողաց հաճելի նորութիւն մը յուսանք պատճառել այնու որ խմբագրութեանս ուղղուած գրքերն անմիջապէս յաջորդ ամիսն Թերթիս ծածկին վրայ պիտի հրատարակուին:

«Հանդիս»ի խմբագրութիւնը կը գնէ հայերէն հին ձեռագիրներ. ձեռագրի մանրամասն ստորագրութիւնը եւ ուղղուած գիրը ծանուցանել:

Բաժանորդագրինն է, արտասահմանի համար, տակեան 10 ֆրանք, վեցամսեայ 6 ֆրանք. Ռուսիոյ համար, տարեկան 4 րուպլի, վեցամսեայ 2 րուպլի 50 կոպէկ:

ԴԻՄԵՆ՝

A la Rédaction de la Revue «Hantess»
VII/2 Mechitaristengasse, 4.

VIENNE, Autriche

ԱՆՍԷՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիճը կը հրատարակուի ամբողջ անգամ մը :
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),
 2 տուար (Ամերիկա) :
 վեցամսեայ՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տուար (Ամերիկա),

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր :
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագրին դրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՍԷՍ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Կահիրէ —	» Ա. Ա. Թորգոմեան
Ռուսճուք. —	» Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ. —	» Ա. Տեմիրճիպաշեան
Պուքրէշ. —	» Արիս Լազար
Դաւրէժ. —	» Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Շորք. —	» Կատարեան
Բրովիտէնս. —	» Նաղարէթ Թաթէոսեան
Ֆրեդնո. —	» Աւագ Կարապետեան
Իսթ Ուոթըրթաուն. —	» Մանուկ Գալստեան
Ուսթըր. —	» Երուանդ Յակոբեան
Չիքակո. —	» Ա. Կարակալուրեան
Պրսթոն. —	» Կ. Յ. Քարակիւլեան